

«ՆՈՐԱՎԱԼՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գագիկ ԳԱԳՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԸՆԵՐԸ
ԱԶԳՎՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԵՔՍՈՒՄ

ԵՐԵՎԱՆ - 2002

Տնտեսական զարգացման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում

Ազգային անվտանգության կապը տնտեսության զարգացման հիմնախնդիրների հետ ունի երկակի բնույթ՝

1. Ազգային արժեքների պահպանման եւ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական հիմքի ապահովում
2. Տնտեսական գործունեության նկատմամբ պատերնալիստական մոտեցում՝ պայմանավորված ազգային անվտանգության պահանջներով:

Առաջին դեպքում տնտեսական զարգացման ցուցանիշներն ուղիղ կապի մեջ են ազգային անվտանգության հիմնախնդիրների հետ: Այսինքն՝ որքան հզոր լինի տնտեսությունը, այնքան նպաստավոր պայմաններ կստեղծվեն ազգային անվտանգության ապահովման համար: Այստեղ տնտեսական զարգացումը միտված է երկու նպատակային ցուցանիշների՝ տնտեսական արդյունավետության և սոցիալական արդարության հավասարակշռված, առավել հնարավոր արագ աճին, որը միաժամանակ պետք է գորգակցվի տնտեսական մեխանիզմի հուսալի գործունեությամբ՝ այսինքն տնտեսական անվտանգության ապահովմամբ: Ինքնին հասկանալի է, որ բացարձակ անվտանգություն ապահովել հնարավոր չէ, քանի որ յուրաքանչյուր տնտեսական գործունեություն իր մեջ որոշակի ռիսկ է պարունակում: Ընդ որում, որքան մեծ է ակնկալվող շահույթը, այնքան բարձր է ռիսկի չափը: Այս հարաբերակցությունների ողջամիտ չափերի որոշումը գուտ տնտեսական հարց չէ. այստեղ պետք է համեստ զանազան անվտանգությունն ապահովող բոլոր ինստիտուտներն՝ անխտիր:

Տնտեսական գործունեության նկատմամբ պատերնալիստական մոտեցումը ենթադրում է տնտեսական գործունեության որոշակի տեսակների սահմանափակում՝ ելնելով ազգային անվտանգության ոչ տնտեսական չափանիշներից: Այս գործառույթն իրականացնողը պետությունն է, որի մոտեցումները ծևավորվում են ազգային անվտանգության այլ ինստիտուտների ազդեցության ներքո:

Այսպիսով՝ տնտեսական զարգացման և ազգային անվտանգության

հարաբերակցության խնդիրը վերոհիշյալ երկու մոտեցումների նպաստավոր հարաբերակցությունն է, որտեղ գլխավոր դերն իհարկե պատկանում է առաջինին: Բանն այն է, որ տնտեսական զարգացման գործընթացները բավականին զգայուն են շուկայական հարաբերություններով չպայմանավորված սահմանափակումների նկատմամբ: Այսինքն՝ տնտեսական համակարգն անզգույշ և չիմնավորված քայլերի դեպքում կարող է փլուզվել ազգային անվտանգությունը գրկելով նյութական հիմքից:

Ներկայացվող աշխատությունը հիմնված է այս հարցերի վերաբերյալ համաշխարհային փորձի ուսումնասիրության և մասնագիտական դիտարկումների վրա:

I. Հայաստանի հանրապետության տնտեսության վերլուծությունն ազգային անվտանգության տեսակետից

Հայաստանի Հանրապետության ներկայիս տնտեսական իրավիճակը հասկանալու համար վերլուծությունը պետք է սկսել դեռևս խորհրդային ժամանակաշրջանից: Խորհրդային տնտեսությունն իրենից ներկայացնում էր փակ տնտեսական համակարգ, որտեղ արտաքին տնտեսական կապերն իրենց մասշտաբներով զգալիորեն զիջում էին ներքին տնտեսական կապերին: Սա պայմանավորված չէ միայն քաղաքական և գաղափարական շարժառիթներով, այլ հասուն է բոլոր մեծ տնտեսություններին, այդ թվում նաև՝ ԱՄՆ-ին կամ Չինաստանին: Հայաստանն այդ տնտեսական համակարգում ինդուստրալիզացված և այդ համակարգի չափանիշներով՝ բարձր տեխնոլոգիաների երկիր էր: Ո՞րն էր դրա պատճառը: Հայաստանը հարուստ չէր բնական ռեսուրսներով, իսկ գյուղատնտեսության համար պիտանի տարածքները փոքր չափեր էին կազմում: Սակայն Հայաստանն օժտված էր բարձր, որակյալ աշխատուժով, որն իր հերթին հայ ազգի՝ կրթության նկատմամբ ավանդականորեն բնորոշ մեծ ծգտնան արդյունքն էր: Ելնելով համաշխարհային փորձից, պետք է ասել սա է այն գործոնը, որը վճռական դեր է խաղում տնտեսապես զարգացած երկիր դառնալու հարցում: Եվ պատահական չէր, որ Հայաստանը խորհրդային տնտեսական համակարգում ուներ զարգացած երկրի կարգավիճակ: Հայաստանին հասուն էին զարգացած երկրներին բնորոշ գրեթե բոլոր չափանիշները: Այն ներմուծում էր հումք, գյուղատնտեսական ապրանքներ, վառելանյութ և արտահանում էր արդյունաբերական ապրանքներ, որոնց մեջ թիզ չէր, խորհրդային համակարգի չափանիշներով, բարձր տեխնոլոգիական արտադրանքի չափը: Հայաստանի բնակչության կենսամակարդարությանը զգալիորեն բարձր էր խորհրդային շատ այլ շոշանների կենսամակարդարությանց: Յարկ է նշել, որ այն ժամանակաշրջանի Հայաստանի տնտեսական դիրքը շատերի կողմից ընկալվում է՝ որպես խորհրդային տնտեսակարգի անհեթեթություն կամ էլ՝ կոմունիստական ազգային քաղաքականության արդյունք: Տնտեսական անհեթեթությունը է համարվում այն, որ խորհրդային Միության այլ տարածքներից Հայաստան էր ներմուծվում հումք՝ այդ հումքի հիման վրա արտադրությունները տեղում հիմնե-

լու փիխարեն: Առաջին հայացքից տարօրինակ թվացող այս երևույթը փորձում են բացատրել նաև տոտալիտարիզմի հիմքերից, այսինքն՝ խորհրդային դեկավարությունը փորձում էր արհեստականորեն ամբողջացնել տնտեսությունը՝ հանրապետություններին իրարից և ըստ այդ էլ կենտրոնից կախվածության մեջ պահելու նպատակով : Այնինչ պատճառը հիմնականում տնտեսական էր՝ հոմքով հարուստ տարածաշրջանների ողջ ռեսուրսները, որպես կանոն, ուղղվում են դրա համար անհրաժեշտ որոշակի նախնական վերամշակման և արտահանման համար: Սա թելադրվում է տնտեսական արդյունավետության պահանջներից, որը հատուկ է ինչպես շուկայական, այնպես էլ՝ պլանային տնտեսություններին: Այլ հարց է, թե տնտեսության այդ երկու ձևերն ինչ չափով են կարողանում գործնականում իրականացնել արդյունավետության աճի տեմպերը:

Խորհրդային քաղաքական համակարգի փլուզումից հետո սկսվեց տնտեսական համակարգի փլուզումը: Այն սկսվեց ազատականացումից, որի հետևանքով համակարգը դարձավ ավելի քաղ: Համակարգ ներխուժեցին արտասահմանյան մրցակիցներն իրենց՝ տեխնոլոգիապես ավելի բարձր արտադրանքով, որի արդյունքում առաջին հերթին և հիմնականում տուժեցին համակարգի տնտեսապես զարգացած երկրների կարգավիճակ ունեցող հանրապետությունները: Եվ եթե դրան ավելացնենք նաև քաղաքական համակարգի փլուզումով պայմանավորված տրամսպորտային ծախսերի կտրուկ աճը՝ ընդհուած մինչև այդ կապերի խզումը, պատկերն էլ ավելի ամբողջական կդառնա: Վերոհիշյալ երկրների առևտրապայմանները կտրուկ վատթարացան, ինչը բերեց նրանց բարեկեցության աննախադեպ անկանու:

Այս իրավիճակում Հայաստանում ֆորմալ տեսակետից իրականացվեցին հիմնարար տնտեսական բարեփոխումների ռազմավարության հիմնական երեք միջոցառումներ, այն է՝ մակրոտնտեսական կայունացում, տնտեսության ազատականացում և պետական ձեռնարկությունների սեփականաշնորհում: Սակայն անտեսվեց մի կարևոր հանգանաք՝ Հայաստանը չի կարող վերոհիշյալ պարամետրերով զարգացած երկիր լինել, քանի որ նրա գրեթե միակ նշանակալից ռեսուրսը մարդկային կապիտալն է: Սակայն այդ ռեսուրսի պահպանման և զարգացման ուղղությանը որևէ էական քայլ չարգեց՝ հաշվի չառնվեց Հայաստանի առանձնահատկությունը: Սա համարժեք է նրան, որ Թուրքմենստանի կամ Աղրբեջանի

նավթն ու գազը, ընդամենը մի քանի տարվա ընթացքում, անհատույց դրւուս հոսեն այդ երկրներից: Միաժամանակ հարկ է նշել, որ վերջին մի քանի տարում այս ուղղությամբ արդեն որոշակի քայլեր են արվում՝ նաև նավորապես բարձր տեխնոլոգիաների արտադրության զարգացման նպատակով:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ներկա դրությամբ իրենից ներկայացնում է փոքր քաց էկոնոմիկա՝ կապիտալի ազատ շարժով: Ազգային արժույթի փիխանակման կուրսը կարգավորվող լողացող է: Թերևս այդպես կարելի է բացատրել վճարային հաշվեկշռի զգալի պակասորդը: Խախտված է ներքին և արտաքին հավասարակշռությունը: Գործազրկության մակարդակը բարձր է, դրա համեմատ բարձր չեն սղածի տեմպերը: Պետական արտաքին պարտքը ներքին համախառն արդյունքի համեմատ մեծ չափերի է հասնում:

Տնտեսությունը գործնականում դրայիկացված է: Առկա են հիպերինֆլյացիոն վիճակին հատուկ երևույթներ՝ տնտեսական գործաքների զգալի մասը կնքվում է ոչ թե արժեզրկման սպասումների հիման վրա, այլ ուղղակիորեն՝ արտադրություվ:

Բանկային համակարգը գործում է ոչ բավարար անարդյունավետությամբ: Կանխիկ միջոցների և բանկային ռեզերվների հարաբերությունը ավանդներին զգալիորեն մեծ է, որի հետևանքով դրամական բազմարկիչի արժեքը ցածր է: Այնինքն՝ բանկային համակարգը գործնականում ավանդային փող չի ստեղծում և դրամական առաջարկը հիմնականում սահմանափակվում է բարձր արդյունավետության փողի զանգվածով:

Դրամական բազմարկիչի ցածր արժեքը պայմանավորված է առևտրական բանկերի նկատմամբ բնակչության անվստահությամբ, որի հետևանքով ազգային խնայողությունների մեծ մասը շրջանցում է բանկային համակարգը՝ ֆինանսավորելով ստվերային տնտեսությունը, ծառայելով որպես հարստության պահպանման և հանրապետությունից կապիտալի արտահոսքի միջոց: Այս վերջին երկու ձևերն ուղղակիորեն ճնշում են գործադրություն արտադրույթի շուկայի վրա, քանի որ բնակչությունը, որպես հարստության պահպանման միջոց, հիմնականում գործածում է արտադրույթը (դոլարը): Ինչ վերաբերում է կապիտալի արտահոսքին, ապա ներկայիս վիճակում այն հնարավոր է միայն արտադրույթի տեսքով: Այս

երևույթները, ազգային արժույթի կարգավորվող լողացող կուրսի և կապիտալի ազատ շարժի պայմաններում, բացասաբար են անդրադարձում կենտրոնական բանկի միջազգային ռեզերվների վրա՝ նվազեցնելով, առանց այն էլ, սուր միջոցները:

Այսպիսով՝ հանրապետության եկանուտների հոսքում տեղի են ունենում մեծ կորուստներ, որոնք այլև չեն վերադառնում ներդրումների և գույտ արտահաննան տեսքով:

Դեռևս բավարար չէ ներդրումային նպատակներով կապիտալի ներհոսքը հանրապետություն: Չնայած օտարերկրյա ներդրումների օրենսդրական որոշակի արտոնություններին՝ բացակայում են ներդրումային ռիսկերի պատճեշման մեխանիզմները: Թույլ է զարգացած արտաքույթի շուկան. գործնականում իրականացվում են միայն առձեռն գործարքներ: Օտարերկրյա ուղղակի ներդրումները հիմնականում ուղղված են տնտեսության բնական մենաշնորհ ներկայացնող ճյուղերին, ինչը հանդիպում է քաղաքական ուժերի ընդդիմությանն ու շահարկումներին: Սրանք առաջնահերթ խնդիրներ են, քանի որ Հայաստանի համար տնտեսական աճի հիմնական գործոններից մեկը կապիտալի ներհոսքն է:

Չնայած շուկայական հարաբերություններին՝ անցնան շուրջ տասը տարիներին, առ այսօր մշակված չեն հանրապետության տնտեսության էկոնոմետրական մոդելները, առանց որոնց տնտեսական քաղաքականության իրականացումը, թե մակրո և թե միկրո մակարդակներում զգալիորեն բարդ է: Օպերատիվ կառավարման համար ծագում են զգալի դժվարություններ, բարձրանում է հեռանկարային ծրագրերի իրականացման անորոշության աստիճանը: Տնտեսության նկատմանը պոպուլյատական մոտեցումների հնարավորությունները աճում են: Նման իրավիճակներում հարկ է լինում դիմել համանմանության մեթոդին՝ այսինքն կիրառել այլ երկրների տնտեսական փորձը: Ամենակի չնվազեցնելով այս մոտեցման նշանակությունը՝ պետք է ընդունել, որ ելնելով Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքից, այն չի կարող հանդիսանալ բավարար հիմք տնտեսական քաղաքականության մշակման ասպարեզում:

II. Տնտեսական զարգացման հիմնական նպատակները եվ նրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների որակական վերլուծությունը

Տնտեսական զարգացման հիմնական նպատակներն են՝

1. Ներքին հավասարակշռությունը՝
 - լրիվ զբաղվածություն, որը բնութագրվում է տարեկան 2-3 տոկոսի համար գործազրկության նորմով՝ ֆրիկցիոն գործազրկություն,
 - տարեկան 2-3 տոկոսը չգերազանցող սղածի տեմպ:
2. Արտաքին հավասարակշռությունը, որը բնութագրվում է վճարային հաշվեկշռի հավասարակշռությամբ, կամ ել ժամանակավոր դրական հաշվեմնացորդով՝ միջազգային ռեզերվները համալրելու նպատակով:
3. Տնտեսական աճի օպտիմալ տեմպը, որն ապահովում է կապիտալի կուտակման ուկե մակարդակին համապատասխան տնտեսական կայունության վիճակ: Այն բնութագրվում է հնարավոր առավելագույն սպառումով:
4. Բարեկեցիկ տնտեսություն.

Այն բնութագրվում է ազգային եկամուտի այնպիսի բաշխմամբ, որի արդյունքում հաստատված տնտեսական արդյունավետության և սոցիալական արդարության մակարդակներն ապահովում են հասարակական բարեկեցության առավելագույն չափ:

Զարգացած և հատկապես զարգացող ու տնտեսապես անկայուն երկրներում կարող են լինել նաև միջանկյալ նպատակներ, որոնց իրականացումը պակաս կարևոր չէ, և որոնք իրենց հերթին հանդիսանում են գործիքներ հիմնական նպատակներին հասնելու համար:

Միջանկյալ նպատակներից են՝ արտահանման համեմատ ներմուծման չափի կրճատումը, ներմուծման փոխարինիչների արտադրության խթանումը, տնտեսության այս կամ այն ճյուղի առաջնահերթ զարգացման անհրաժեշտությունը, ներդրումների խթանումը, ազգային խնայողությունների անհրաժեշտ մակարդակի ապահովումը, աշխատուժի միգրացիայի կարգավորումը, տոկոսադրույթի անհրաժեշտ մակարդակի ապա-

հովումը և այլն:

Այս նպատակների իրականացման հարցում կա իիմնականում երկու գլոբալ մոտեցում, որոնք պայմանավորված են պետության դերով տնտեսական ասպարեզում:

Առաջին դեպքում ենթադրվում է, որ պետությունը տնտեսական ասպարեզում պետք է գրավի պահիվ դիրք: Այսինքն՝ պետությունը տնտեսության որևէ պլանավորում և կարգավորում չպետք է իրականացնի: Եվ ընդհանրապես նրա դերը իիմնականում պետք է սահմանափակվի միայն մասնավոր կապիտալի գործունեության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտ ստեղծելով: Ինչ վերաբերում է վերահսկիչ կամ դրամա-վարկային քաղաքականությանը, ապա այն պետք է դրսկորվի բավականաչափ պահիվ ձևով: Եվ բավական է այս ամենն ապահովել, որպեսզի գործեն ազատականացված տնտեսության ինքնակարգավորման ադապտացիոն մեխանիզմները՝ պահովելով տնտեսական աճ: Սակայն այդ մեխանիզմների իիմնական թերությունն այն է, որ նրանք գործում են երկարաժամկետ հեռանկարում, ինչը կարող է հանգեցնել զգալի բարդությունների երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում: Հետևաբար նրանց հուսալիության աստիճանն անհամենատ ցածր է և ազգային անվտանգության տեսանկյունից՝ ոչ պիտանի:

Երկրորդ մոտեցումը պայմանավորված է տնտեսական ասպարեզում պետության ակտիվ կարգավորիչ դերով: Այստեղ հարկ է նշել, որ բացարձակ ազատական տնտեսություն, ինչպես նաև բացարձակ ազատ տնտեսական մրցակցություն իրական տնտեսական համակարգերում գոյություն չունեն: Կարելի է ասել, որ դա աբստրակցիա է: Իրականում տնտեսական համակարգերը միջանկյալ դիրք են գրավում զուտ կապիտալիզմի և վարչական պլանային տնտեսության միջև: Այս տեսանկյունից նույնիսկ առավել ազատական այնպիսի երկրում, ինչպիսին ԱՄՆ-ը է, պետությունը բավականին ակտիվ դեր է խաղում տնտեսության կարգավորման մեջ՝ բնակչությանը տրամադրելով այնպիսի ապրանքներ ու ծառայություններ, որոնք նաև ապահովություն կամ էլ արտադրել, կամ էլ արտադրում է ոչ բավարար քանակով: Իսկ եվրոպական երկրներում պետության դերն էլ ավելի մեծ է այս հարցում: Սրանք իրողություններ են, որոնցից ոչ մի շուկայական տնտեսության երկիր չի կարող խուսափել՝ ինչպես տեսական, այնպես էլ՝ գործնական բնագավառներում: Իսկ այն երկրնե-

րը, որտեղ այս հարցերին ոչ բավարար մոտեցում է ցուցաբերվում, հայտնվում են տնտեսապես ծանր կացության մեջ:

Ցավոր մեր հանրապետությունում նույնպես նման իրավիճակ էր ստեղծվել ժամանակին՝ ոչ ճիշտ տնտեսական քաղաքականության և պետության կարգավորիչ դերն անտեսելու պատճառով, ինչպես օրինակ բավականին արագ տենապերով իրականացված համատարած սեփականաշնորհումն էր՝ առանց համապատասխան պայմաններ ստեղծելու արդյունաբերության և գյուղատնտեսության հետսեփականաշնորհման շրջանում արդյունավետ գործունեության ապահովման համար: Այսու կողմից, Շայաստանի նման փոքր երկրում, որտեղ ներքին շուկաները բավականաչափ փոքր են, մոնոպոլիզացիայի վտանգն ակնհայտ է: Տնտեսության շատ ճյուղեր նույնիսկ կարող են հայտնվել բնական մոնոպոլ վիճակում, երբ մեկ ֆիրմա է ունակ հասնելու մասշտաբի դրական արդյունքի: Նման իրավիճակներում պետք է ասել, որ շուկայական մրցակցությունը խիստ վտանգավոր է, վնասակար և կարող է ընդունել ուժային ձևեր: Այս ամենը հասարակության վրա կարող է ծանր անդրադառնալ, և պետությունը պարտավոր է իրականացնել համապատասխան գնային քաղաքականություն:

Այսպիսով, պետության կարգավորիչ դերը տնտեսության մեջ անժխտելի է: Սակայն միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ այն իրականցնելը բավականին բարդ խնդիր է:

Ինչպես վերը նշվեց, տնտեսական նպատակները բազմաթիվ են, այնինչ տնտեսական քաղաքականության գործիքների թիվը սահմանափակ է: Իսկ տնտեսական քաղաքականության հաջող իրականացումը մեծապես պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր նպատակի իրականացմանը կցված լինի առնվազն մեկ անկախ գործիք: Շակառակ դեպքում տարփող քաղաքականությունը կարող է ծախողվել: Հետեւաբար, տնտեսական քաղաքականության համալիր ծրագրերի մշակման եւ հուսալի իրականացման գործընթացում պետությունը պետք է համախմբի բոլոր հնարավոր գործիքները: Այս ամենը պահանջում է խորը հաշվարկներ, ինչպես՝ մակրո, այնպես էլ՝ միկրո մակարդակներում, եւ որ առանձնապես կարեւոր է՝ այդ հաշվարկները պետք է փոխկապակցված լինեն: Այսինքն համապատասխան մոդելավորման միջոցով պետք է հայտնաբերել միկրոմակարդակից մակրոմակարդակի անցման կապերը, առանց որոնց

պետական ծրագրերն անխուսափելիորեն կկրեն տարանջատված բնույթ եւ նույնիսկ կարող են հակասել միմյանց:

Դարկ է նշել, որ այս հարցերը քավականաչափ լուսաբանված չեն ժամանակից տնտեսագիտության մեջ, ինչը զգալի դժվարություններ է ստեղծում տնտեսական քաղաքականության հաջող իրականացման գործում:

Տնտեսական քաղաքականության տիպերը հիմնականում երեքն են՝

1. Ծախսերի փոփխման քաղաքականություն.

Քաղաքականության այս տիպն իր մեջ է ներառում հարկա-բյուջետային եւ դրամա-վարկային քաղաքականությունները:

Դարկա-բյուջետային քաղաքականության գործիքներն են պետական ծախսերը (G) եւ հարկերը (T): Սրանք իրականացնում է կառավարությունը՝ խորհրդարանի կողմից տրված լիազորությունների սահմանում:

Դրամա-վարկային քաղաքականության գործիքներն են՝

-բարձր արդյունավետության փողի զանգվածը (Mh), որն իրենից ներկայացնում է շրջանառության մեջ գտնվող կանխիկ փողի եւ կենտրոնական բանկում պահվող առեւտրական բանկերի պարտադիր ռեզերվների գումարը,

-դիսկոնտային տոկոսադրությը (id), որով կենտրոնական բանկը վարկ է տրամադրում առեւտրական բանկերին:

Այս քաղաքականությունն իրականացվում է կենտրոնական բանկի կողմից:

2. Ծախսերի փոխադրման քաղաքականություն.

Այն բնութագրում է արժութային կուրսի փոփխմանը (դեվալվացիա կամ ռեվլվացիա): Այս քաղաքականության գործիքն է արժույթի փոխանակման կուրսը (E): Այն իրականացնում է կենտրոնական բանկը:

3. Ուղակի հսկողություն, որի գործիքներն են՝

-արտաքին առեւտրի հսկողությունը (ներմուծման տարիֆներ եւ բաժնեչափեր, արտահանման օժանդակումներ, առեւտրական բանկերում ներմուծվող առանձին ապրանքների համար նախնական անտոկոս դեպոզիտների ավանդադրման պահանջ, օտարերկոյա գրոսաշրջիկության,

ինչպես նաև ատասահմանում գրոսաշրջիկների ծախսերի սահմանափակում, պետգումների քաղաքականություն, առողջապահության եւ անվտանգության չափորինակներ),

-ֆինանսական եւ արժութային հսկողություն (փաթեթային ներդրումների տեսքով կապիտալի արտահանման վրա հարկ՝ տոկոսադրությների հավասարեցման նպատակով, արտահանմանում ուղղակի ներդրումների սահմանափակում, սեփական արժույթի ապահով գնում՝ հավելագույն, բազմակի արժութային կուրսեր՝ պերճանքի եւ երկրորդական նշանակության ապրանքների ներմուծման համար բարձր, իսկ առաջին անհրաժեշտության ապրանքների ներմուծման համար ցածր արժութային կուրս, ներմուծման լիցենզիաներ, ներմուծման եւ արտահանման համար տարբեր արժութային կուրսեր, ընթացիկ օպերացիաներով գործարքների համար հաշվարկների սահմանափակում, կապիտալով գործարքների համար հաշվարկների սահմանափակում, արտահանմանից ստացված ողջ արտաքույթի պարտադիր հանձնում պետությանը),

-հսկողության այլ ձեւեր (գների եւ աշխատավարձի վրա հսկողություն, եկամուտների կարգավորման քաղաքականություն):

Ուղղակի հսկողության քաղաքականությունն իրականացվում է կառավարության եւ կենտրոնական բանկի կողմից:

Այսպիսով, պետության տնտեսական կարգավորիչ քաղաքականությունն իրականացվում է վերը նշված գործիքների միջոցով՝ որոշակիորեն սահմանելով նրանց մեծության չափերը:

Ինչպես նշվեց սույն գլխի սկզբում, տնտեսական քաղաքականությունն իրականացման գործիքը է տնտեսական զարգացման չորս նպատակների իրականացմանը: Սակայն հաճախ պետական մարմիններն իրենց տրամադրության տակ գտնվող բոլոր գործիքներն ուղղում են հիմնականում առաջին նպատակի իրականացմանը՝ այն համարելով առաջնահերթ: Այսինքն խնդիրը սա է բարձրացնել համախառն ներքին արդյունքի չափը՝ միաժամանակ զգերազանցելով սղաճի ընթացքի թույլատրելի մեծությունը: Սա էլ իր հերթին պայմանավորվում է անբողջական պահանջարկի եւ առաջարկի համադրումով:

Սակայն այս խնդիրի ողջ բարդությունն այն է, որ նույն տնտեսական քաղաքականությունն ամբողջական պահանջարկի, առաջարկի եւ սղաճի ընթացքի վրա կարող է թողնել հակադիր ազդեցություններ: Օրինակ՝ պետա-

կամ ծախսերի (G) աճը, ընդլայնելով ամբողջական պահանջարկը միաժամանակ կարող է բացասարար անդրադառնալ սղածի ընթացքի վրա, կամ որոշակի դեպքերում G-ի աճը կարող է բարձրացնել ֆինանսական շուկայի տոկոսադրույթը՝ նվազեցնելով ներքին ներդրումների չափը:

Ինքնին հասկանալի է, որ այս հարցերին սպառիչ պատասխան հնարավոր չէ տալ առանց քանակական վերլուծության, ինչը հնարավոր է իրականացնել միայն տնտեսական մոդելների առկայության դեպքում: Այդ մոդելների մշակմանը կանորադառնանք աշխատության հաջորդ գլուխներում, իսկ այստեղ սահմանափակվենք միայն որակական վերլուծությամբ:

Որեւէ կրնկրետ դեպքում որակական վերլուծություն կատարելիս անհրաժեշտ է նախապես նշել՝

-երկրի տնտեսության տիպը՝ այսինքն այն փոքր, թե մեծ էկոնոմիկա է իրենից ներկայացնում: Նշենք, որ փոքր էկոնոմիկա է կոչվում այն երկրի տնտեսությունը, որի ներքին տոկոսադրույթի փոփոխությունը որեւէ ազդեցություն չի բողնում միջազգային շուկաներում գործող տոկոսադրույթի վրա: Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսությունը փոքր էկոնոմիկա է հանդիսանում,

-արժույթի փոխանակման կուրսի տիպը՝ ֆիքսված, լողացող, լողացող կարգավորվող,

-կապիտալի շարժի ձեւը՝ ազատ, թե կարգավորվող:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության տնտեսությունն իրենից ներկայացնում է փոքր, բաց էկոնոմիկա, արժույթի փոխանակման կուրսը՝ լողացող կարգավորվող, կապիտալի շարժը՝ ազատ, ապա վերլուծություն կատարենք հատկապես այդ դեպքի համար:

Ենթադրենք՝ կառավարությունն ամբողջական պահանջարկն ընդլայնելու նպատակով ցանկանում է իրականացնել վերահսկիչ էքսպանսիա՝ այսինքն մեծացնել պետական ծախսերի չափը: Հասկանալի է, որ ննան քայլ կարելի է կատարել պետական բյուջեի պակասորդի մեծացնան հաշվին: Պակասորդի աճը ֆինանսավորելու նպատակով պետքանձարանը պետք է իրականացնի լրացուցիչ պետական պարտատոնսերի վաճառք ֆինանսական շուկայում: Պարտատոնսերի առաջարկի ավելացումը կօգն նրանց շուկայական գինը: Քանի որ ֆինանսական շուկայի տոկոսադրույթը հիմնականում պայմանավորված է պետական պարտատոնսերի գնով և նրանց կուպոնային դրույթով, ապա շուկայական տոկոսադրույթը կաճի: Կապիտալի ազատ շարժի պայմաններում տեղի կունենա կապիտալի ներ-

հոսք հանրապետություն, որի հետեւանքով կաճի ազգային արժույթի կուրսը: Սա իր հերթին կառաջացնի զուտ արտահանման կրծատում՝ բացասարար անդրադառնալով առեւտրային հաշվեկշռի վրա, որի հետեւանքով կաճի վճարային հաշվեկշռի պակասորդը: Մյուս կողմից, ի նկատի ունենալով, որ պետական ծախսերը եւ զուտ արտահանումն ամբողջական պահանջարկի վրա բողնում են նույն մուլտիպլիկատիվ արդյունքը, ապա ամբողջական պահանջարկի ընդլայնում տեղի չի ունենա: Կառավարության ջանքերն ի չիք կդառնան զուտ արտահանման կրծատումն պատճառով եւ դեռ ավելին՝ կվատանա վճարային հաշվեկշռի վիճակը:

Ստեղծված իրավիճակը կարող է շտկել բացառապես կենտրոնական բանկը, եթե իհարկե կապիտալի ներհոսքին զուգընթաց իրականացնի համապատասխան դրամական էքսպանսիա՝ այսինքն ավելացնի փողի առաջարկը ֆինանսական շուկայում: Փողի առաջարկի ավելացնանը զուգընթաց կնվազի տոկոսադրույթը, եւ զուտ արտահանումը կընդունի իր նախկին չափերը: Միայն այս դեպքում կառավարության ջանքերն ամբողջական պահանջարկը մեծացնելու ուղղությամբ կարող են հաջողությամբ պսակել:

Սակայն դա եւս վերջնական լրտում չէ, քանի որ ամբողջական պահանջարկի ընդլայնումը դեռեւս բավարար չէ ներքին համախառն արդյունքի աճի համար: Այստեղ վճռական դեր է խաղում նաեւ ամբողջական առաջարկը՝ իր հնարավորություններով հանդերձ: Դա դեռեւս չօգտագործված ռեսուրսներն են, արտադրական հզորությունները եւ որ ամենակարեւորն է՝ մարդկային կապիտալը:

Այժմ դիտարկենք այն դեպքը, եթե ամբողջական պահանջարկի ընդլայնման նպատակով նախաձեռնությունն իր ձեռքն է վերցնում կենտրոնական բանկը՝ կատարելով դրամական էքսպանսիա: Փողի առաջարկի մեծացնանը զուգընթաց ֆինանսական շուկայում տեղի կունենա տոկոսադրույթի անկում, ինչը կնպաստի սպառման եւ ներքին ներդրումների աճին: Մյուս կողմից դրամական զանգվածի աճը կօգն դրամի կուրսը արժութային շուկայում նպաստելով զուտ արտահանման աճին: Դրամի արժեզուկումն իր դրամական ազդեցությունը կրողնի նաեւ վճարային հաշվեկշռի վրա: Այսպիսով, եթե ամբողջական առաջարկը բավարարում է վերը նշված պայմանները, ապա կենտրոնական բանկի նախաձեռնությունը կարող է հաջողվել:

Այսպիսով, կարելի է փաստել, որ վերոհիշյալ պայմանների դեպքում մակրոտնտեսական քաղաքականությունը հիմնականում իրականացվում է

կենտրոնական բանկի կողմից, իսկ կառավարության գործունեությունը ուղղվում է դեպի միկրոնակարդակ՝ ուղղակի հսկողության իրեն վերապահված գործիքների շրջանակում:

Սակայն հարկ է նշել, որ ներկայումս կենտրոնական բանկը խուսափելով ռիսկից, վարում է դրամա-վարկային զուսպ քաղաքականություն: Հետեւարար տնտեսական զարգացման հիմնական գործոնը ներդրումների աճն է, որն ամբողջական պահանջարկի բարձրացման վրա թողնում է լրիվ մոլուտիպիկատիվ արդյունք: Սակայն ներդրումների աճը միևնույն ժամանակ մեծացնում է առևտուի հաշվեկշռի պակասորոշ, ինչը պայմանավորված է ներմուծման սահմանային հակվածության չափով: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ պակասորդի ֆինանսավորումը պետք է ձգտել իրականացնել կապիտալի ներհոսքի միջոցով, որը հնարավորություն կընձեռի խուսափել պետական արտաքին պարտքի աճից և միջազգային ռեզերվների կորստից: Այս հարցի լուծումն ամենակարևորն է ներդրումային քաղաքականության մեջ, որի իրականացման համար քաղաքական կայունության, օրենսդրական դաշտի, հարկային արտոնությունների և տնտեսական ենթակառուցվածքների ապահովումն անհրաժեշտ, բայց դեռևս ոչ բավարար պայման է: Հարկավոր են համապատասխան մեխանիզմներ ներդրողների փոխատվության ռիսկերի պատճեման համար:

Կապիտալի ներհոսքն իրականացվում է ուղղակի և փաթեթային ներդրումների տեսքով, ինչպես նաև բանկային փոխատվությունների միջոցով: Ուղղակի ներդրումները սովորաբար իրականացվում են բազմազգ ընկերությունների կողմից՝ ներդրման երկրում նաև անազյուրերի հիմնադրմանը կամ տեղական ֆիրմաների բաժնետոմսների որոշակի քանակի գնումով, որը գերազանցում է կանոնադրական կապիտալի 75 տոկոսը: Հակառակ դեպքում բազմազգ ընկերությունը դուստր ընկերության լրիվ կառավարման իրավունք ծնոթ չի բեր: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ բաժնետոմսերի վաճառքը, ի տարբերություն մասնաճյուղերի հիմնադրման, մակրոտնտեսական տեսակետից դեռևս ներդրում չի հանդիսանում, քանի որ այդ գործարքի արդյունքում նոր կապիտալ ֆոնդեր չեն ստեղծվում: Այս տեսակետից բաժնետիրական ընկերությունների պետական բաժնետոմսների մասնավորեցման ժամանակ առավել կարևորություն պետք է տալ ներդրումային ծրագրերին, որոնք ներդրողները պատրաստվում են իրագործել հետմասավորեցման ժամանակ, իսկ պետական բաժնեմասը պետք է ամբողջությամբ վաճառել կամ թողնել 25 տոկոսից ավել:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների շարքում նախընտրելի պետք է համարել հորիզոնական ամբողջացման ծևերը, որոնք բազմազգ ընկերությունները սովորաբար կիրառում են զարգացած երկրներում: Հայաստանի նկատմամբ նման մոտեցումը պայմանավորված է տեղական հումքի ռեսուրսառողջածությամբ, աշխատուժի որակով և համեմատաբար ցածր աշխատավարձով: Սակայն մեծ են տրամսադրությային ծախսերը, որոնք ամենալուրջ խոչընդոտն են հանդիսանում նման ներդրումների իրականացման համար: Այս խոչընդոտի վերացման միակ ճանապարհը պետական դրամատվություններն են ներդրողներին, որոնք իհարկե չպետք է գերազանցեն համապատասխան հարկային մուտքերի չափը, ինչպես նաև՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացման ռեժիմը: Այսինքն նախագծերի հաջող իրականացման համար տարիների կտրվածքով պետք է ապահովել դրամական կանխիկ հոսքերի այնպիսի չափեր, որպեսզի նախագծի ընթացիկ գուտ արժեքը լինի դրական մեծություն և որոշակիորեն գերազանցի ներդրող երկրում, ինչպես նաև նոցակից երկրներում համապատասխան ներդրման նախագծերի արժեքը: Այս միջոցառումները հնարավորություն կընձեռեն բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, աշխատավարձի չափերը, ինչպես նաև՝ կճապատեն առաջավոր տեխնոլոգիաների ներմուծմանը հանրապետություն: Այսպիսով, ուղղակի ներդրումների խթանման համար հարկային քաղաքականությունը դեռևս բավարար չէ, անհրաժեշտ է իրականացնել բյուջետային ակտիվ ներդրումային քաղաքականություն: Եվ քանի որ հարկային օրենքների հաճախակի փոփոխությունները բիզնեսի տեսանկյունից ցանկալի չեն, տարեկան բյուջեների կազմնան ժամանակ պետք է նախատեսել անհրաժեշտ հարկային ծախսեր՝ ներդրումային օժանդակումների նպատակով: Այս գործընթացը պետք է իրականացնել օտարերկրյա ներդրողների հետ անմիջական բանակցությունների միջոցով:

Փաթեթային ներդրումները, որոնք իրականացվում են ռիսկային և ոչ ռիսկային ֆինանսական ակտիվների գնումով, ներկայում մեծ հեռանկարներ չունեն: Հայաստանի ծեռնարկությունների ռիսկային ակտիվները (բաժնետոմսերը) օժտված են բարձր չոփվերսիֆիկացվող ռիսկայնությամբ և գրեթե գրոյական եկամտաբերությամբ: Հիմնական պատճառը ժամանակին վարած սխալ քաղաքականությունն է, որտեղ գլխավոր դերը պատկանում է սեփականաշնորհման իրականացման ներդրմաներին: Այսպես, ըստ գործող կարգերի սեփականաշնորհվող գույքի գնահատման ժամանակ

ձեռնարկության շահութաբերությունը (բիզնեսի գինը) արտացոլվում է ակտիվներում՝ արհեստականորեն բարձրացնելով նրանց հաշվեկշռային արժեքը և հետևի ականաշնորհման ժամանակահատվածում նվազեցնելով շահութաբերությունը: Իրենց հերթին սեփականաշնորհման ենթակա ձեռնարկությունները, գինը գցելու նպատակով, սկսեցին աշխատել ի վեհաբիզնեսի՝ նվազեցնելով շահութաբերությունը, իսկ առանձին դեպքերում՝ հասնելով նաև վնասաբերության: Սեփականաշնորհումն իրականացնող պետական մարմիններն այս երևույթի դեմն առնելու համար դիմեցին առնվազն տարօրինակ քայլ՝ վնասները սկսեցին գնահատվել որպես ակտիվներ և վաճառվել գնորդներին: Եվ եթե այս ամենին ավելացնենք նաև բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության գործընթացում տեղ գտած լուրջ սխալները, պատկերն ամբողջական կդառնա: Հանրապետության ավելի քան 200 ամենաշահութաբեր և բիզնեսի տեսանկյունից գրավիչ ձեռնարկությունների սեփականաշնորհման ժամանակ արձանագրվեց գերածանորդագրություն՝ միջինը 332,8 տոկոս, որի հետևանքով ձեռնարկությունների կանոնադրական կապիտալներն արհեստականորեն աճեցին և երեք անգամ: Սեփական ակտիվներն իրենց կրկնակի չափով համալրվեցին շինուալ ակտիվներով, որոնք ունակ չեն որևէ լրացուցիչ արժեք ստեղծելու: Բաժնետոմսերի շահութաբերությունը նվազեց և երեք անգամ: Զգալիորեն նվազեց կապիտալի սահմանային արդյունքի չափը, և եթե նկատի ունենանք ֆինանսական շուկայում գործող բարձր տոկոսադրույթը, ապա ակնհայտ կդառնա տվյալ ձեռնարկություններում փաթեթային ներդրումների ահնարինությունը: Էնիսիա արված բաժնետոմսերն ուղղակի ոչ որ չի գնի:

Պակաս պրոլետային չէ նաև ոչ ռիսկային ակտիվների, օրինակ՝ պարտատոմսերի էնիսիան: Այս ակտիվների եկամտաբերությունը, թեև հաստատագրված է, սակայն մեծ են արտարժույթի փոխանակման և փոխատվության ռիսկերը: Եվ եթե արտարժույթի փոխանակման ռիսկը դեռ հնարավոր է պատճեշել ապառնի շուկայում՝ կրկնափոխանակման միջոցով, ապա փոխատվության ռիսկի պատճեշման որևէ հուսալի մեխանիզմ չկա՝ նաև նախավորական չի գործում նաև գրավի մեխանիզմը:

Դրությունը որոշ չափով կարելի է շտկել բաժնետոմսերի վերանվանումով և ակտիվների վերագնահատմանը, սակայն այդ գործընթացը հնարավոր է իրականացնել միայն բաժնետերերի, պարտատերերի և պետական մարմինների փոխադարձ համաձայնությամբ: Բաժնետերերը պետք է համակերպվեն բաժնետոմսերի անվանական արժեքների, պարտատերերը

պարտքերի, իսկ պետական մարմինները՝ գույքի հարկման բազայի նվազեցման հետ:

Բանկային փոխատվությունները ծիշտ մեխանիզմների ապահովման դեպքում, թերևս ամենահեռանկարայինն են և գերադասելին: Կապիտալի ներհոսքի այս ձևը փոխառու երկրներին հնարավորություն է տալիս դրամամիջոցներն օգտագործել ավելի ձկունորեն՝ կախման մեջ չընկնելով օտարերկրյա կապիտալից և ինքնուրույն իրականացնելով իրենց տնտեսական և քաղաքական ռազմավարությունը: Բանկային փոխատվությունների հիմնական թերությունն այն է, որ փոխառու երկրների պետական մարմիններն այդ փոխատվությունները հաճախ օգտագործում են սպառման, այլ ոչ թե ներդրումների համար: Սակայն այդ թերությունը կվերացվի, եթե համապատասխան մեխանիզմները փոխատվություններն անմիջականորեն ուղղեն դեպի ներքին ներդրողները: Սա հնարավոր է իրագործել միայն հետևյալ երկու պայմանների կատարման դեպքում:

Արտարժույթի փոխանակման ռիսկի պատճեշում

Այս ռիսկի պատճեշման համար փոխատում պետք է հնարավորություն ունենա արտարժույթի ապառնի շուկայում իրականացնել կրկնափոխանակման գործարք: Սակայն Հայաստանի Հանրապետությունում գործում է միայն արտարժույթի առձեռն շուկա, իսկ հայկական դրամն արտարժույթի միջազգային շուկաներում չի արժենչվում: Հետևաբար փոխատուի հետ կրկնափոխանակման պայմանագիր պետք է կնքի հանրապետության կենտրոնական բանկը: Պայմանագիրը պետք է պարունակի փոխատվության արդյունքում սպասվելիք կանխիկ հոսքերի մեծությունն արտարժույթով և դրամով, ինչպես նաև՝ ժամկետները: Փոխատում կենտրոնական բանկից պայմանագրի կնքման պահին առձեռն գործարքով դրամ է գնում, իսկ կանխիկ հոսքերի ժամկետներին համապատասխան՝ դրամով գնում է արտարժույթ: Փոխանակման ապառնի կուրսը որոշվում է փոխառու և փոխատու երկրների տոկոսադրույթների համարժեքության պայմանով: Յուրաքանչյուր կանխիկ հոսքի պահին կենտրոնական բանկի և փոխատուի միջև փոխանակման ենթակա արտարժույթի և դրամի ծավալները որոշվում են տվյալ պահին գործող առձեռն և ապառնի կուրսերով: Եթե առձեռն կուրսը մեծ է կամ հավասար ապառնի կուրսին, ապա փոխատուն կանխիկ հոսքին համապատասխանող արտարժույթը գնում է առձեռն շուկայում: Հակառակ դեպքում, առձեռն շուկայում գնված արտարժույթից բացի, կենտ-

բանկը փոխատուին տալիս է լրացուցիչ հատուցում՝ արտարժույթով, կանխիկ հոսքի և առձեռն շուկայում գնված արտարժույթի տարբերության չափով: Հարկ է նշել, որ կրկնափոխանակման այս գործարքը որոշակիորեն տարբերվում է դասական ձևից: Այն փոխատուին տալիս է դրամի վաճառքի ընտրության իրավունք: Այսինքն փոխատուն ոչ միայն պատմեշում է արտարժույթի փոխանակման ռիսկը, այլ նաև կարողանում է օգտվել առձեռն շուկայի ընձեռած նպաստավոր պայմաններից: Կենտրոնական բանկն իր հերթին հնարավորություն է ստանում ձեռք բերված արտարժույթն օգտագործել առավել ճկունորեն:

Փոխատվության ռիսկի պատմեշումը

Օտարերկրյա փոխատուն ներքին ներդրողին վարկը տրամադրում է դրամով, իսկ փոխատվության ռիսկը՝ պատմեշում համապատասխան մեծության գրավով: Վարկի տրամադրումը դրամով էական նշանակություն ունի: Հակառակ դեպքում չի գործի գրավի մեխանիզմը, չի պատմեշվի ինչպես՝ փոխատվության, այնպես էլ՝ արտարժույթի ռիսկը: Բանն այն է, որ տնտեսապես անկայում և զարգացող երկրներում ազգային արժույթի արժեգրկումը հազվադեպ երևույթ չէ: Իսկ արժեգրկման դեպքում գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի և այլ ակտիվների գինը՝ արտահայտված արտարժույթով, զգալիորեն ընկնում է, իսկ ազգային արժույթով աճում: Հետևաբար արտարժույթով վարկի տրամադրման դեպքում գործարքի ապագան անկանխատեսելի է դառնում փոխատուի համար:

Այս միջոցառումների իրականացումը կնպաստի օտարերկրյա կապիտալի ներկայացման համրապեսություն, ինչը ներկա իրավիճակում տնտեսության զարգացման տեսանկյունից այլընտրանք չունի:

Ներդրումային գործունեության խթանման համար առաջնահերթ նշանակություն ունի նաև ներքին ռեսուրսների մորթիկացիան: Այսինքն անհրաժեշտ են մեխանիզմներ՝ ազգային խնայողությունները ներքին ներդրողներին ուղղելու համար: Այս ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը, աշխարհա-քաղաքական եւ աշխարհա-տնտեսական դիրքը, ինչպես նաև էթնո-տնտեսական առանձնահատկությունները: Սա հատկապես վերաբերում է արժույթային հսկողությունից հրաժարվելու և կապիտալի ազատ շարժ ապահովելու ուղղությամբ տարվող քա-

ղաքականությանը: Մինչդեռ 1990-ական թվականների տվյալներով Միջազգային արժույթային հիմնադրամի անդամ 178 երկրներից միայն 24 առաջատար զարգացած երկրներն են, որ չեն կիրառում արժույթային հսկողություն: Ի դեպ այս երկրների թվում չեն Ֆրանսիան, Իտալիան, Նորվեգիան, Շվեդիան: Հիմնադրամի անդամ շուրջ 154 երկրներ կիրառում են արժույթային հսկողության ձևերն իրենց տնտեսական քաղաքականության իրականացման գործընթացում: Այսպէս՝ 139 երկիր կիրառում է բազմակի արժույթային կուրսի, 138 երկիր՝ ներմուծման սահմանափակման, 136 երկիր՝ արտահանումից ստացված ողջ արտարժույթը պետությանը պարտադիր հանձնան քաղաքականություն:

Այս կապակցությամբ պետք է իրականացնել արտարժույթի եւ ֆինանսական շուկաների որոշակի բարեփոխումներ:

Անհրաժեշտ է անցնել կապիտալի շարժի կարգավորման քաղաքականության՝ մանավանդ որ Միջազգային արժույթի հիմնադրամի կանոնադրությունն ամենակին չի պահանջում ազգային արժույթի փոխարկելիություն կապիտալի շարժով գործարքների համար: Միջազգային արժույթի հիմնադրամի տեսանկյունից երկրները կարող են ազատորեն կիրառել կապիտալի շարժի հսկողություն՝ առանց այլ երկրների և իրենց իր հիմնադրամի համաձայնության: Սահմանափակումներն արգելված են միայն ընթացիկ հաշվի գործարքների նկատմամբ: Սակայն գործնականում շատ երկրներ և նույնիսկ Հիմնադրամի անդամ երկրներ կիրառում են սահմանափակումներ ընթացիկ հաշվիների փոխարկելիության վրա, որոնք առանձին դեպքերում թույլատրված են նույն Հիմնադրամի կողմից:

ՀՀ կենտրոնական բանկը դրամի փոխարկելիությունն արտարժույթով պետք է ապահովի միայն ընթացիկ հաշվի գործարքների՝ ծառայությունների, ներդրման եկամուտների և միակողմանի փոխանցումների համար, իսկ կապիտալի շարժով գործարքների համար՝ համապատասխան պետական ծրագրերի շրջանակում: Փոխարկման ենթակա պետք է լինի միայն այն փողը, որն ավանդադրված է բանկում:

III. Բիզնես-ցիկլերը՝ որպես տնտեսական անկայունության գլխավոր պատճառ

Տնտեսական համակարգի անվտանգ, հուսալի գործունեության հարցում վճռորոշ նշանակություն ունի նրա կայունությունը ներքին և արտաքին ցնցումների նկատմամբ, ինչը մեծապես պայմանավորված է պետության կարգավորիչ գործառույթների հաջող իրականացմամբ:

Ավելորդ չել այս խնդիրների հրատապությունը և չափազանց մեծ կարևորությունը, քանի որ տնտեսական ցնցումները շղթայական ազդեցությամբ իրենց խիստ բացասական հետևանքներն են թողնում ողջ տնտեսության վրա՝ առաջանելով նրա այս կամ այն բնագավառի կազմալուծում և առանձին դեպքերում տնտեսական համակարգի փլուզում:

Այս բացասական երևույթներից ապահովագրված չեն նույնիսկ տնտեսական գերիզող երկրների էկոնոմիկաները: Որպես դասական օրինակ բավարար է նշել ԱՄՆ-ի 30-ական թվականների մեջ ճգնաժամը, երբ տնտեսական այս հզոր երկրի էկոնոմիկան հայտնվել էր ծայրահեղ վատ վիճակում՝ սոցիալական բարոյություններով հանդերձ: ճգնաժամը հաղթահարելու համար պահանջվեցին շուրջ տասը տարվա մեծագույն ջանքեր:

Դրույթումն անհամեմատ ավելի բարդ է փոքր երկրների համար, քանի որ նրանք չունեն մեծ էկոնոմիկաներին հատուկ ներուժ, և այս խնդիրներին նաև ներեսային մոտեցում ցուցաբերելու դեպքում հնարավոր է քաղաքական համակարգի փլուզում՝ ընդհուպ մինչև անկախության կորուստ:

Ցուրաքանչյուր շուկայական տնտեսության զարգացում բնութագրվում է երկու քաղադիչով՝ զարգացման աճող տրենդով և նրա նկատմամբ գործարար ակտիվության տատանումներով, որոնք հայտնի են բիզնես-ցիկլ անվանամբ:

Զարգացման տրենդը ցույց է տալիս ամբողջական թողարկման եւ զբաղվածության նակարդակի ժամանակային կապը՝ այլ կերպ ասած նկարգում է տնտեսության երկարաժամկետ աճը: Ինչ վերաբերում է բիզնես-ցիկլերին, ապա սրանք բնութագրում են ամբողջական թողարկման եւ զբաղվածության նակարդակի ժամանակային տատանումները տրենդի նկատմամբ: Շուկայական տնտեսական համակարգերում բիզնես-ցիկլերը տնտեսական զարգացման անխուսափելի ուղեկիցներն են, որոնք պայմանավորված են ինչպես համաշխարհային տնտեսության մեջ

կատարվող փոփոխություններով (համաշխարհային տոկոսադրույթի փոփոխություն, այլ երկրների համախառն ներքին արդյունքների փոփոխություն եւ այլն), այնպես էլ՝ տվյալ տնտեսական համակարգի կառուցվածքային յուրահատկություններով (աշխատանքային պայմանագրերի կնքման առանձնա-հատկություններ, կապիտալի շարժի աստիճան, արժույթի փոփոխակնան կուրսի ռեժիմ եւ այլն):

Յարկ է նշել, որ տարբեր երկրների համար բիզնես-ցիկլերի առաջացման պատճառները տարաբնույթ են: Մասնավորապես փոքր երկրների համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, հիմնական պատճառ կարող է հանդիսանալ արտաքին առեւտրապայմանների փոփոխությունը, ինչն իր հերթին պայմանավորված է նրանով, թե տվյալ երկիրը հումք է արտահանում, թե՝ պատրաստի արտադրանք:

Մակրոտնտեսական փոփոխականները, ըստ բիզնես-ցիկլերի նկատմամբ իրենց փոփոխման բնույթի, ընդհանուր դեպքում բաժանվում են երեք խմբի՝ պրոցիկլային, հակացիկլային եւ ացիկլային: Պրոցիկլային է կոչվում այն փոփոխականնը, որը դրսեւորում է ածի միտում՝ տնտեսական վերելքի եւ նվազում՝ տնտեսական անկնան ժամանակ: Հակացիկլային փոփոխականի դեպքում ծիշտ հակառակն է: Ացիկլային փոփոխականների զարգացման ընթացքն անմիջականորեն կապված չէ բիզնես-ցիկլերի հետ:

Ինչպես համաշխարհային տնտեսության բազմաթիվ ուսումնասիրություններն են ցույց տալիս, պրոցիկլային փոփոխականների թվին են պատկանում համախառն արտադրանքը, շահույթը, դրամական ագրեգատները, գների նակարդակը, փողի շրջապտույտի արագությունը, տոկոսադրույթը, լայն սպառման եւ՝ գյուղատնտեսական ապրանքների եւ բնական ռեսուրսների արտադրությունը, բնական ռեսուրսների եւ՝ գյուղատնտեսական ապրանքների գները: Հակացիկլային են համարվում պատրաստի արտադրական պաշարների, արտադրական գործազրկության եւ սնանկացումների նակարդակները: Ացիկլային փոփոխականների շարքին կարող է դասվել, օրինակ, արտահանումը (ԱՄՆ): Սակայն պետք է նշել, որ տարբեր երկրների դեպքում այս ավանդական դասակարգումը կարող է այլ տեսք ունենալ:

Տնտեսական անվտանգության տեսակետից կարենոր նշանակություն ունի բիզնես-ցիկլերի տեւողության չափը, ինչպես նաև նրանց կանխա-

տեսման ճշությունը: Բիզնես-ցիկլերի պարբերության ընդգրկումը օգա-լիորեն լայն է: Օրինակ, ԱՄՆ-ի համար այն տատանվում է 28-ից մինչեւ 117 ամիս: Ըստ որում ռեցեսիոն (անկման) ժամանակահատվածը կազմում է ցիկլի պարբերության 26-45 տոկոսը:

Բիզնես-ցիկլերի նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս նրանց առաջացման ստոխաստիկ բնույթը: Այսինքն ցիկլերը դիտարկվում են՝ որպես տնտեսական համակարգերի վրա պատահական ազդեցությունների (իմպուլսների) հետեւանք: Արդյունքում յուրաքանչյուր իմ-պուլս՝ ելնելով իր բնույթից եւ տնտեսական համակարգի կառուցվածքից, համապատասխան ձեւով տարածվում է համակարգի ներսում՝ այն դուրս բերելով հավասարակշռությունից:

Այդ իմպուլսները կամ ինչպես ընդունված է ասել տնտեսական ցնցումները (շոկերը) ընդհանուր դեպքում բաժանվում են երեք խմբի՝ առաջարկի ցնցումներ, քաղաքական ցնցումներ եւ մասնավոր սեկտորի պահանջարկի ցնցումներ:

Առաջարկի ցնցումներն անմիջականորեն ներազդում են տնտեսական համակարգի արտադրական գործընթացների վրա: Նրանց թվին են պատկանում տեխնոլոգիական տեղաշարժերը, բնակլիմայական փոփոխությունները, բնական արհավիրքները, հումքի նոր աղբյուրների հայտնաբերումը, հումքի համաշխարհային գների տատանումները, ինչպես նաև՝ նոմինալ աշխատավարձերի մակարդակի փոփոխությունները:

Քաղաքական ցնցումները հետեւանք են պետական մարմինների կողմից ընդունված մակրոտնտեսական բնույթի որոշումների: Այդ ցնցումների շարքին են դասվում դրամական առաջարկի, արժույթի փոխանակման կուրսի, պետական ծախսերի եւ հարկային քաղաքականության տատանումները:

Մասնավոր սեկտորի պահանջարկի ցնցումներից են սպառողական եւ ներդրումային պահանջարկի, արտաքին առեւտրապայմանների փոփոխությունները:

Յարկ է նշել, որ ցիկլային տատանումների տարածման մեխանիզմների վերաբերյալ առ այսօր չկա մեկ ընդհանուր մոտեցում: Ներկայումս գոյություն ունեն բիզնես-ցիկլերի առաջացման եւ նրանց տարածման առանձ-նահատկությունները բացատրող մի շարք տեսություններ: Տարածայնությունները իմնականում պայմանավորված են հետեւյալով՝ բիզնես-ցիկ-

լերի առաջացումը հետեւանք է մրցակցության անկատարությա՞ն (աշխատավարձերի եւ գների ոչ ծկունությանը), թե՝ բիզնես-ցիկլերը կարող են տեղի ունենալ նաև կատարյալ մրցակցության ժամանակ:

Դաշվի առնելով այն, որ տնտեսական ցնցումները եւ նրանց հետեւանք հանդիսացող բիզնես-ցիկլերն եական ազդեցություն ունեն տնտեսական անվտանգության ապահովման հարցում, հարկ ենք համարում այդ տեսությունների քննարկմանն անդրադարձ առավել հանգանակութեն:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԻՄՊՈՒԼՍՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԲԻԶՆԵՍ-ՑԻԿԼԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏճԱԾ

Այս տեսությունն ամենահինն է բիզնես-ցիկլերի առաջացման եւ տարածման ձեւի մեկնաբանման տեսակետից: Այստեղ իմպուլսների առաջացման հիմնական աղբյուրը ներդրումային ծախսերն են, ինչն ըստ Կեյնսի ձեւակերպման պայմանավորված է ձեռնարկատերերի այսպես կոչված «կենդանական հոտառությամբ»՝ այսինքն նրանց լավատեսությամբ կամ վատատեսությամբ ապագայի հանդեպ: Այսինքն «կենդանական հոտառությամբ» պայմանավորված ավտոնոմ ներդրումների փոփոխությունը պատճառ է հանդիսանում ամբողջական արտադրանքի տատանումների համար:

Սակայն Կեյնսի մակրոտնտեսական մոդելում ներդրումների փոփոխությունը ամբողջական արտադրանքի վրա թողնում է բազմարկչային արդյունք, որը կայուն գործընթաց է եւ անմիջականորեն տատանումներ չի առաջացնում: Այս ուղղությամբ տնտեսագիտական ուսումնասիրությունները հանգեցրել են երկու հիմնական մեխանիզմների՝ բիզնես-ցիկլերի առաջացման գործընթացների եւ ավտոնոմ ներդրումների փոխադարձ կապի բացահայտման համար:

Առաջինը՝ ձեռնարկությունների կողմից իրենց արտադրական պաշարներում իրականացվող գուտ ներդրումների ցիկլային մեխանիզմն է: Այս մեխանիզմի հիմքում ընկած է այն դրույթը, որ ձեռնարկությունները, որպես կանոն, ծգուում են որոշակիորեն հաստատուն պահել իրենց արտադրական պաշարների չափերը: Սա իր հերթին պայմանավորված է նրանով, որ ձեռնարկության արտադրանքի նկատմամբ պահանջարկի չնախատեսված աճի դեպքում ձեռնարկությունը կարողանա բավարարել

այն: Դակառակ դեպքում այն կարող է կորցնել իր գնորդներին: Յենց այս ձգտումն էլ հիմք է հանդիսանում ամբողջական արտադրանքի ցիկլային տատանումների համար: Այս մեխանիզմի բացահայտման համար սովորաբար դիտարկվում է հետեւյալ պարզ մոդելը՝

$$Q = Q_u - Q_{\omega} + I_o, \quad (\text{III.1})$$

որտեղ

Q -ն միավոր ժամանակահատվածում (օր, ամիս, տարի) ձեռնարկության ամբողջական արտադրանքն է,

Q_u -ն ձեռնարկության արտադրանքի այն մասն է, որից ստացված եկամուտը գնում է սպառման,

Q_{ω} -ն ձեռնարկության արտադրանքի այն մասն է, որից ստացված եկամուտը ծախսվում է արտադրական պաշարները համալրելու համար,

I_o -ն «կենդանական հոտառությամբ» պայմանավորված արտադրանքի այն մասն է, որից ստացված եկամուտը ուղղվում է գուտ ներդրումներին բացառությամբ պաշարներում կատարվող ներդրումների:

Այժմ ենթադրենք, որ իր արտադրանքի վաճառքի ծավալների նկատմամբ ձեռնարկությունն ունի հաստատուն սպառմանը: Այսինքն՝ եթե նա նախորդ ժամանակաշրջանում վաճառել է Q_{-1} միավոր արտադրանք, ապա ընթացիկ ժամանակաշրջանում նրա սպառմանը նույնն էն:

Ելնելով այն դրույթից, որ տվյալ ժամանակաշրջանում սպառման չափը հավասար է ստացված եկամուտի հաստատուն բաժնեմասին, կստանանք՝

$$C_{-1} = bQ_{-1}, \quad C_1 = bQ_1,$$

որտեղ

b -ն սպառման սահմանային հակվածությունն է ($0 < b < 1$):

Մյուս կողմից, նկատի ունենալով, որ $Q = Q_{-1} + Q_u - bQ_1$ կունենանք՝

$$Q_u = bQ_{-1} \quad (\text{III.2})$$

Ինչպես արդեն նշեցինք, ձեռնարկությունները ձգտում են պահպանել արտադրական պաշարների հաստատուն չափերը: Յետեւարար, եթե ընթացիկ ժամանակաշրջանում վաճառքի ծավալները աննախադեպ աճում են, ապա պաշարների չափը համապատասխանաբար նվազում է: Իսկ եթե վաճառքի ծավալները նվազում են, ապա պաշարների չափն աճում է: Ընթացիկ ժամանակաշրջանում արտադրական պաշարների համալրման չափը որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Q_{\omega} = bQ_{-1} - bQ_{-2} \quad (\text{III.3})$$

Ընթացիկ ժամանակաշրջանում ձեռնարկության ամբողջական արտադրանքի (III.1) բանաձեւում տեղադրելով (III.2) եւ (III.3) առնչությունները կստանանք՝

$$Q_1 = bQ_{-1} - bQ_{-2} \quad (\text{III.4})$$

Այս արտահայտությունն իրենից ներկայացնում է իտեռացիոն բանաձեւ, որտեղ ընթացիկ ժամանակաշրջանում արտադրանքի չափը կախված է նախորդ երկու ժամանակաշրջաններում արտադրանքի չափերից: Այսպիսի բանաձեւով որոշված ամբողջական արտադրանքի մեծությունն ունի ցիկլային տատանողական բնույթ, որտեղ ցիկլի ժամանակաշրջանների թիվը կախված է սպառման սահմանային հակվածության մեծությունից:

Ներդրումային իմպուլսների միջոցով բիզնես-ցիկլերի առաջացման երկրորդ մեխանիզմը բազմարկչային-աքսելերատորի մոդելն է: Այստեղ ներդրումների զարգացման ընթացքը բացատրվում է աքսելերատորի մեխանիզմով, երբ ներդրումների չափը պայմանավորված է արտադրանքի ծավալների տատանումներով: Այս մեխանիզմի գործողությունը նկարգրվում է հետեւյալ պարզ մոդելի միջոցով՝

$$Q = C + I \quad (\text{III.5})$$

Այստեղ C սպառումը կախված է նախորդ ժամանակաշրջանում ստաց-

ված եկամուտից՝

$$C=aQ_1 \quad (\text{III.6})$$

Ներդրումներն իրենց հերթին ֆունկցիա են եկամուտների փոփոխություններից՝ մեկ ժամանակաշրջան լագով, ինչպես նաև էկզոդեն ներդրումներից, որոնք պայմանավորված են ձեռնարկատերերի «կենդանական հոտառությամբ»՝

$$I=b(Q_{-1} - Q_{-2}) + I_0 \quad (\text{III.7})$$

Ընթացիկ ժամանակաշրջանում Q_{-1} արտադրանքը (III.6) եւ (III.7) առնչությունների հիման վրա կը ներդրուի հետեւյալ տեսքը՝

$$Q_1=(a+b)Q_{-1} - bQ_{-2} + I_0 \quad (\text{III.8})$$

Այս արտահայտությունը նույնպես իրենից ներկայացնում է խտեացին բանաձեւ եւ ունի տատանողական բնույթը:

Չնայած նրան, որ աքսելերատորի սկզբունքն ունի բավականին հիմն պատճություն, բայց եւ այնպես առ այսօր այն կարեւոր դեր է խաղում բիզնես-ցիկլերի առաջացումը բացատրելու հարցում:

ԲԻԶՆԵՍ-ՑԻԿԼԵՐԻ ՆԵՐԴԱՍՍԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բիզնես-ցիկլերի առաջացման հիմնահարցերում կեյսի մոտեցումները վճռորոշ դեր էին խաղում դեռևս 1940-1970 թվականներին: Այդ տարիներին լայնորեն տարածված էր այն կարծիքը, որ դասական մոդելներն ի վիճակի չեն բացատրելու բիզնես-ցիկլերի առաջացման պատճառները: Ըստ դասական մոտեցումների պահանջարկի տատանումներն ազդում են գների, այլ ոչ թե արտադրանքի ծավալների վրա, քանի որ առաջարկի կորը դասական մոդելներում իրենից ներկայացնում է ուղղահայաց գիծ:

Սակայն վերջին տարիներին, ներդասականների կողմից առաջարկվել են մոդելներ, որտեղ տնտեսական ցնցումները գների եւ աշխատավարձի

ճկումության պայմաններում նույնիսկ կարող են հիմք հանդիսանալ արտադրանքի ծավալների տատանման համար: Բիզնես-ցիկլերի ներդասական տեսություններում ներկայում գերիշխում են երկու մոդելներ՝

- Անկատար տեղեկատվության մոդելը,
- Իրական բիզնես-ցիկլերի մոդելը:

Անկատար տեղեկատվության մոդելում հիմք է ծառայում այն փաստը, որ ձեռնարկատերերը, ինչպես նաև սպառողները, տիրապետում են ոչ լոիվ տեղեկատվության՝ դրամական էքսպանսիայի արդյունքների վերաբերյալ: Այսպես օրինակ՝ ձեռնարկատերերն իրենց կողմից թողարկված արտադրանքի գների բարձրացումը սխալմամբ ընդունում են որպես գների հարաբերական բարձրացում եւ այդ իսկ պատճառով ընդունում են արտադրության ծավալները: Բանվորներն իրենց հերթին նոմինալ աշխատավարձի բարձրացումը դիտարկում են որպես աշխատավարձի իրական բարձրացում եւ ելեկով դրանից՝ մեծացնում են աշխատանքի առաջարկը: Այսինքն, եթե ձեռնարկատերերը եւ բանվորները լոիվ տեղեկացված լինեին, ապա գների եւ աշխատավարձերի աճը չին ընդունի որպես հարաբերական աճ, եւ այդ իսկ պատճառով արտադրության ծավալների որեւէ փոփոխություն տեղի չէր ունենա:

Այս գաղափարի տեսական ձեւակերպումը տրվել է Լուկասի կողմից, ըստ որի յուրաքանչյուր ապրանքի շուկա ննան է մի առանձին կղզյակի: Շուկայի մասնակիցները եւ կղզյակի բնակիչները լոիվ տեղեկացված են այնտեղ կատարվող իրադարձությունների մասին, սակայն հարեւան կղյակների վերաբերյալ տեղեկատվության իրագեկ են դառնում որոշակի ուշացումով (լագով):

Այս մոդելի առավել նշանակալից արդյունքներն ամփոփվում են Լուկասի կողմից մշակված առաջարկի ֆունկցիայում՝

$$Q=Q_n + b(P - P^e), \quad (\text{III.9})$$

որտեղ

Q_n -ն արտադրանքի թողարկման «բնական» մակարդակն է, որը համապատասխանում է գործազրկության այսպես կոչված «բնական» մակարդակին,

P -ը ընթացիկ ժամանակաշրջանում գների փաստացի մակարդակն է,

Р^е-ն ընթացիկ ժամանակահատվածում գների սպասվելիք մակարդակն է,

բ-ն հաստատում գործակից է:

Լուկասի մոդելի էական առանձնահատկությունն այն է, որ փողի առաջարկում սպասվելիք փոփոխություններն ազդում են միայն գների եւ ոչ թե արտադրության ծավալների վրա: Արտադրության ծավալների փոփոխությունը տեղի է ունենում միայն դրամական անսպասելի էքսպանսիաների դեպքում:

Բիզնես-ցիկլերի առաջացման պատճառները հիմնավորող ներդասական երկրորդ մոդելն իրական տնտեսական ցիկլի տեսությունն է: Այն հիմնվում է IS-LM մակրոմոդելի վրա՝

$$Y=c(Y - T) + I(r) + G \quad (\text{III.10})$$

$$M/P=L(r, Y)$$

որտեղ

Y -ը ազգային եկամուտն է,

T -ն հարկերի չափն է,

I -ն ներդրումների չափն է,

G -ն պետական ծախսերն են,

M -ը փողի զանգվածն է,

P -ն գների ինդեքսն է,

r -ը իրական տոկոսադրույքն է,

c -ն սպառման սահմանային հակվածությունն է:

Առաջին հավասարումը բնութագրում է IS կորը, որը քննարկվող մոդելում կոչվում է իրական ամբողջական պահանջարկի կոր: Ելելով այն բանից, որ ներդասական տեսություններում ամբողջական առաջարկի կորը իրենից ներկայացնում է արտադրության «բնական» \bar{Y} մակարդակին համապատասխանող ուղղահայց գիծ, ապա

$$Y=\bar{Y} \quad (\text{III.11})$$

Իրական տնտեսական ցիկլի տեսությունում գները որեւէ էական դեր չեն խաղում, հետեւաբար մոդելի (III.10) երկրորդ հավասարումը չի դիտարկվում:

Այսպիսով, իրական տնտեսական ցիկլի մոդելը ներկայացվում է հետեւյալ երկու հավասարումների համակարգի տեսքով՝

$$Y=c(\bar{Y} - T) + I(r) + G$$

$$Y=\bar{Y} \quad (\text{III.12})$$

Որպեսզի (III.12) մոդելը կարողանա նկարագրել բիզնես-ցիկլերի գործնթացը, ապա այն պետք է ունենա տատանողական բնույթ: Դա հնարավոր է իրականացնել միայն այն դեպքում, եթե արտադրության «բնական» մակարդակը տնտեսական գործնացում փոփոխվող մեծություն լինի: Սոդելի հեղինակները \bar{Y} -ի փոփոխական բնույթը կապում են աշխատանքի միջժամանակային հարաբերական գնի հետ՝

$$\frac{\text{Աշխատանքի միջ-}}{\text{ժամանակային հա-}} = \frac{(1+Z)W_1}{W_2} \quad (\text{III.13})$$

րաբերական գինը

որտեղ

W_1 -ը առաջին ժամանակաշրջանում իրական աշխատավարձի մեծությունն է,

W_2 -ը երկրորդ ժամանակաշրջանում իրական աշխատավարձի մեծությունն է:

Այսինքն, եթե տվյալ աշխատողը ցանկանում է կատարել ընտրություն, թե որ ժամանակաշրջանում է ավելի նպատակահարմար աշխատել կամ հանգստանալ, ապա նա պետք է ելնի աշխատանքի միջժամանակային գնի մեծությունից: Եթե այն մեծ է մեկից, ապա աշխատողը կնախնական աշխատել առաջին ժամանակաշրջանում եւ հանգստանալ երկրորդում: Տվյալ մեծության մեկից փոքր լինելու դեպքում տեղի կունենա ճիշտ հակառակը:

Արտադրության «քնական» մակարդակի ՝ Վ փոփոխական բնույթը կապվում է նաեւ արտադրության տեխնոլոգիաների կտրուկ փոփոխությունների հետ: Այստեղ ՝ Վ-ի փոփոխությունը կատարվում է երկու ուղղությամբ՝

1. Տեխնոլոգիական կտրուկ փոփոխությունները բարելավում են արտադրական ֆունկցիաները, որի հետեւանքով (III.12) համակարգի երկրորդ հավասարման մեջ նույն տոկոսադրույթին համապատասխանում է ավելի մեծ ազգային եկամուտ (արտադրանք): Իրական առաջարկի կորը տեղափոխվում է աջ՝ մեծացնելով աճբողջական առաջարկը:

2. Նոր տեխնոլոգիական հնարավորությունների աճը բերում է ամբողջական պահանջարկի ընդլայնման, որի հետեւանքով իրական ամբողջական պահանջարկի կորը տեղափոխվում է աջ:

Քիզնես-ցիկլերի առաջացումը բացատրող տեսությունների չորրորդ՝ հիմնական խումբը գների եւ աշխատավարձի ոչ ճկունության ներկեյնսական տեսություններն են:

Ինչպես հայտնի է, կեյնսական տեսությունների հիմքում ընկած է կարճ ժամանակահատվածներում գների եւ աշխատավարձի ոչ ճկունության դրույթը: Եթե այս դրույթը միավորենք պաշարներում ներդրումների ցիկլի կամ բազմարկիշ-աբսելերատորի մոդելների հետ, ապա թիզնես-ցիկլերի առաջացումը հնարավոր է բացատրել պահանջարկի ցնցումների միջոցով:

Սակայն հարկ է նշել, որ կեյնսական մոդելը համապատասխան միկրոտնեսական հիմքեր չունի, եւ նեռկեյնսական տեսությունների ողջ նպատակն է գտնել ավելի խորը բացատրություն գների եւ աշխատավարձի ոչ ճկուն բնույթի վերաբերյալ: Այս տեսակետից նեռկեյնսական ուսումնասիրությունները տարվել են մի շարք ուղղություններով:

ԱՇԽԱՏԱՍՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղության կողմնակիցները գտնում են, որ երկարաժամկետ աշխատանքային պայմանագրերն էականորեն ազդում են աշխատանքի շուկայի վրա, որի հետեւանքով աշխատավարձի մակարդակի կապը

նրա պահանջարկի հետ թույլ է արտահայտվում: Այսինքն, աշխատավարձի մեծությունն աստիճանաբար է հարմարվում պահանջարկում տեղի ունեցող փոփոխություններին: Սա առանձնապես հատուկ է զարգացած արդյունաբերական երկրներին, որտեղ մեծ չափով տարածված է լեգալ աշխատանքային պայմանագրերի կնքման համակարգը: Պայմանագրերը, որպես կանոն, կնքվում են մեկից մինչեւ երեք տարվա ժամկետով, որտեղ սովորաբար նշվում է աշխատավարձի չափը, ինդեքսացիայի կարգը՝ կապված նախորդ սղաճի մակարդակի հետ, պայմանագրի վերակնքման պայմանները, որոնք նախատեսում են աշխատանքային պայմանագրի վերաբերյալ նոր բանակցությունների անցկացում, եթե սղաճի մակարդակը գերազանցում է նախօրոք պայմանավորված չափը:

Միաժամանակ հարկ է նշել, որ աշխատանքային պայմանագրերի այս համակարգը կրում է սահող բնույթ: Այսինքն, տնտեսության տարբեր ճյուղերում պայմանագրերի կնքումը տեղի է ունենում ժամանակի տարբեր պահերին: Սրա հետեւանքով, պահանջարկի ցնցումների դեպքում (օրինակ՝ դրամական էքսպանսիա) տեղի է ունենում արտադրության ծավալների փոփոխություն:

Աշխատանքային պայմանագրերի կնքման գործընթացը, որպես կանոն ձեւակերպվում է ինստիտուցիոնալ կերպով՝ արհմիությունների եւ աղմինիստրացիաների միջեւ կոլեկտիվ բանակցությունների կարգով: Ընդ որում, արհմիությունները բանակցությունները վարում են իրենց անդամների (ինսայդերների) եւ ոչ թե ողջ աշխատուժի անունից, որի թվում է նաեւ արհմիության անդամ չհանդիսացող աշխատուժը (առևտսայդերներ): Արհմիությունները, պաշտպանելով ինսայդերների շահերը, ձգտում են ապահովել իրական աշխատավարձի բարձր մակարդակ, ինչն ամրագրում է պայմանագրերում եւ հնարավորություն չի տալիս գործազուրկ առևտսայդերներին գցել աշխատանքի գինը շուկայում: Այս ազդեցությունն առավել էական է հատկապես այն երկրներում, որտեղ արհմիութենական շարժման կենտրոնացման աստիճանը միջին մակարդակի է այսինքն կրում է ճյուղային բնույթ: Այս երկրներում գործազրկության մակարդակը որոշակիորեն ավելի բարձր է կենտրոնացված կամ լրիվ ապակենտրոնացված արհմիութենական շարժման երկրների համեմատ:

ՈՉ ԲԱՑԱՐԱՅՑ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Այս տեսությունը փորձում է բացատրել աշխատավարձի ոչ ճկուն բնույթը՝ ոչ բացահայտ պայմանագրերի շրջանակներում: Ենթադրվում է, որ բանվորները հակված չեն ռիսկի, իսկ ֆիրմաները ռիսկի նկատմամբ ցուցաբերում են չեզոք վերաբերնունք: Հետեւաբար գործատու ֆիրմաներն իրենց աշխատողներին վճարում են իրական աշխատավարձի այնպիսի չափ, որը ներառում է ոչ միայն նրանց կողմից կատարված աշխատանքի փոխհատուցումը, այլ նաև որոշակի գումար՝ տնտեսական հնարավոր ցնցումներից ապահովագրելու նպատակով: Ֆիրմաների նման վարվելակերպը ծևական տեսակետից կարող է ել չարձանագրվել աշխատանքային պայմանագրերում՝ այսինքն դրսեւորվել ոչ բացահայտ ձեւով: Այդ իսկ պատճառով, տնտեսական ցնցումների ժամանակ աշխատավարձերը ոչ ճկուն բնույթի են:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նախորդ տեսություններում մասնավորապես նշվում էր, որ «աշխատանքային ներդրման միավորը» հստակ ձեւակերպված հասկացություն է: Սակայն գործնականում այդպես չէ: Աշխատողներն իրականում էապես տարբերվում են իրենց ունակություններով թե՛ կրթության տեսակետից, թե՛ բնատուր ընդունակություններով: Մյուս կողմից՝ յուրաքանչյուր աշխատող իր աշխատանքային գործունեության ընթացքում կարող է ցուցաբերել զանազան ունակություններ այս կամ այն աշխատանքի կատարման ժամանակ: Յասկանալի է, որ գործատու ֆիրմաները շահագոգիր են իրենց աշխատողների՝ ինչպես հնարավորին բարձր մասնագիտական կարողություններով, այնպես էլ՝ աշխատանքային ներդրումների առավելագույն չափով: Սակայն տվյալ ուղղություններով անընդհատ հսկողությունը ֆիրմաների համար օգալիորեն թանկ է նստում: Այդ իսկ պատճառով, նրանք հսկողությունն իրականացնում են ժամանակ առ ժամանակ, եւ որպեսզի աշխատողները չթերանան իրենց պարտականությունների մեջ, առավել նպատակահարմար են գտնում իրական աշխատավարձի չափը սահմանել շուկայականից ավելի բարձր չափով: Այդ չափը որոշ-

վում է աշխատողի՝ տվյալ ֆիրմայում ստացած աշխատավարձի եւ այլ ֆիրմաներում սպասվելիք աշխատավարձի տարբերությամբ: Նման նույնությունը ցուցաբերող ֆիրմաները գտնում են, որ այսպիսի պայմաններում աշխատատեղի կորուստն իրենց աշխատակիցների համար կարող է ավելի թանկ նստել: Հետեւաբար, նրանք հակված կլինեն դրսեւորել իրենց ողջ ունակությունները: Այս մարտավարությունը պահպանվում է նաեւ տնտեսական ցնցումների ժամանակ, ինչը իհմք է հանդիսանում աշխատավարձի ոչ ճկունությանը:

«ՄԵՆՅՈՒ ԾԱԽՍԵՐԻ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ի տարբերություն ներկեյնսական նախորդ տեսությունների, այս տեսությունը փորձում է բացատրել գների ոչ ճկունության երեւութը: Ֆիրմաներն իրենց արտադրանքի գների փոփոխման համար ստիպված են կատարել որոշակի ծախսեր, որոնք հայտնի են «մենյու ծախսեր» անվանումով: Այդ ծախսերը պայմանավորված են գնային նոր կատալոգների հրատարակմամբ, առեւտրային ավտոմատների ձեւափոխմամբ եւ այլն: Միաժամանակ, հարկ է նշել, որ «մենյու ծախսերը» սովորաբար մեծ արժեք չեն ներկայացնում: Սակայն, եթե մաքսիմում շահույթ բերող ապրանքային գինն առանձնապես մեծ չէ գործող գնից, ապա ըստ այս տեսության՝ ֆիրմաները գնային փոփոխություն չեն կատարում: «Մենյու ծախսերի» տեսությունն ունի նաև որոշակի փոփոխական հիմնավորում՝ մասնավորապես դա վերաբերում է բերթերի վաճառքի գնին:

Այսպիսով, համաձայն այս տեսության, տնտեսական ցնցումների ժամանակ ապրանքային գները կարող են փոփոխվել միայն այն դեպքում, եթե ցնցումների չափը գգալիորեն մեծ է:

Այսպիսով, բիզնես-ցիկլերը շուկայական տնտեսական համակարգերի գործունեության անբաժանելի մասն են հանդիսանում, եւ այդ իսկ պատճառով մեծ սպառնալիք են ներկայացնում ցանկացած շուկայական տնտեսությամբ երկրի ազգային անվտանգությամբ: Այս տեսակետից տնտեսական քաղաքականության կարեւորագույն խնդիրն է ոչ միայն ապահովել տնտեսական զարգացման հնարավորին չափով աճող տրենի, այլ նաեւ հանահարթեցնել բիզնես-ցիկլերի ամպլիտուդները եւ հաճախակա-

նությունը՝ ձգտելով մեծացնել տնտեսական վերելքը եւ առավելագույնս կրճատել ետածման ժամանակաշրջանները:

Սակայն, հարկ է նշել, որ այսպիսի քաղաքականություն վարելու հարցում տնտեսագետները համակարծիք չեն: Չնայած այն բանին, որ ներկայումս նրանց մեծամասնությունն ընդունում է պետության կարգավորիչ քաղաքականության անհրաժեշտությունը, բայց եւ այնպես տնտեսագետների թեւել ոչ մեծաքանակ, բայց բավականին ազդեցիկ խումբ այդպիսի քաղաքականությունը համարում է անարդյունավետ՝ այն համարելով նույնիսկ տնտեսական ցուցումների հիմնական պատճառներից մեկը: Տնտեսագետների տվյալ խումբը ելնում է այն անժխտելի փաստից, որ մակրոտնտեսական մոդելներն անկատար են եւ շատ դեպքերում համապատասխան կերպով չեն ներկայացնում տնտեսության մեջ գործող իրական կապերը: Մյուս կողմից, տնտեսական քաղաքականությանն ուղղված միջոցառումներն ինստիտուցիոնալ պատճառներով ճիշտ ժամանակին չեն իրականացվում, եւ նրանց ազդեցությունը տնտեսական գործընթացների վրա տարածվում է որոշակի ժամանակային լագով: Սա իր հերթին պատճառ է հանդիսանում տնտեսական ճգնաժամերի էլ ավելի խորացմանը: Պետք է ասել, որ այս տեսակետից նրանք որոշակի չափով իրավացի են: Մակրոտնտեսական պարամետրերն իրենցից ներկայացնում են ինտեգրալ ցուցանիշներ, եւ նրանց միջեւ գործող կապերը դետերմինիստական չեն եւ առավել չափով կրում են ընդգծված ստոխաստիկ բնույթ: Այստեղ հարկ է նշել, որ ստատիստիկ մոտեցումները, որպես կանոն, հաջողվում են հատկապես այն դեպքերում, երբ ստոխաստիկ գործընթացների հիմքում ընկած են որոշակի ինվարիանտ օրինաչափություններ:

Տնտեսական գործընթացների համար, որոնք մեծապես կախված են սուլքելու վերը գործոններից, նման օրինաչափությունների բացահայտումն անհամենատ դժվար խնդիր է: Դրությունն էլ ավելի է բարդանում նրանով, որ տնտեսական գործընթացները հայտնի պատճառներով հնարավոր չեն փորձարկել լարորատոր պայմաններում, ինչն էկոնոմնետրական ուսումնասիրությունների հիմնական դժվարությունն է:

Այսպիսով երկընտրանք է առաջանում՝ պետությունն արդյո՞ք պետք է ակտիվորեն մասնակցի տնտեսական կարգավորմանը, թե՝ ոչ: Վերոհիշյալ տնտեսագետների կարծիքն այս հարցուն միանշանակ է նրանք երկրորդ մոտեցման կողմնակիցներն են: Հիմնական փաստարկն այն է, թե

շուկայական տնտեսությունն իր մեջ արդեն իսկ պարունակում է ինքնակարգավորման մեխանիզմներ, եւ պետությունն իր միջամտություններով ուղղակի չպետք է խանգարի տնտեսական զարգացման գործընթացներին: Փաստարկն առավել քան վիճելի է: Տնտեսության ինքնակարգավորման մեխանիզմներն էապես պայմանավորված են կատարյալ մրցակցության գաղափարով: Սա, իհարկե, որոշ առումով աբստրակցիա է: Տնտեսագետությանը հայտնի չուկաների չորս տեսակներից նմանատիպ մրցակցության նաև կարելի է խոսել միայն կատարյալ մրցակցային չուկայի դեպքում: Սակայն այդպիսի չուկաների ստեղծման պայմաններն այնքան կոշտ են եւ վերացական, որ գործնականում նման չուկաների ստեղծման հնարավորությունները խիստ կասկածելի են՝ գոնե փոքր տնտեսական համակարգերի համար՝ ինչպիսին Հայաստանի Հանրապետության տնտեսությունն է: Բավական է նշել այդպիսի չուկաների գոյության համար անհրաժեշտ մի քանի պայմաններ՝

1. Ապրանքների համասեռություն
2. Տվյալ ապրանքի հազարավոր արտադրողների առկայություն
3. Միլիոնավոր գնորդների առկայություն

Ակնհայտ է, որ գոնե փոքր երկրների տնտեսություններում նման բան հնարավոր չէ:

Չուկայական մյուս երեք տեսակներում, որտեղ արտադրողները գին որոնող են, այլ ոչ թե գին ստացող, կարող են ծագել զանազան պայմանագրային համաձայնություններ, որոնք վերջնականապես ի չիք են դարձնում կատարյալ մրցակցության գաղափարը: Պետությունն այստեղ հրամայաբար պետք է իր կարգավորիչ դեր ստանձնի՝ օրենսդրական ճանապարհով եւ ուղղակի հսկողությամբ ազգային անվտանգությանը հարվածող այս խիստ բացասական երեւույթի դեմն առնելու համար: Այստեղ համապատասխան օրենսդրության առկայությունը դեռևս բավարար չէ, քանի որ պայմանագրային համաձայնությունները շատ հաճախ գործում են նաև քոլարկված ձեւով: Նետեւաբար, այս հարցը պետք է լինի գործարար կառավարման ուշադրության կենտրոնում:

Սակայն կարտելային համաձայնությունների վերացման դեպքում նույնիսկ, կատարյալ մրցակցություն հնարավոր չէ ապահովել: Նեշի տնտեսական հավասարակշռության վիճակ ապահովող քանակական օլիգոպոլիաների դեպքում նույնիսկ հնարավոր չէ իրականացնել այն: Օլիգոպոլի-

աները, բնականորեն հանդիսանալով գին որոնողներ, հետեւելով միմյանց շուկայական նարտավարությանը, հաստատում են այնպիսի օպտիմալ գներ, որոնք թեպետ զիջում են մոնոպոլ գներին, բայց եւ այնպես որոշակիորեն բարձր են կատարյալ մրցակցային գներից: Սա օրյեկտիվ իրականություն է: Այստեղ պետության կարգավորիչ քաղաքականության դերը ոչ թե օլիգոպոլիաների արգելումն է (դա լիովին հակասում է շուկայական տնտեսության էռլույանը), այլ զուտ տնտեսական լծակների միջոցով այդ օպտիմալ գների հնարավորին չափով նվազեցումը: Սակայն, այս միջոցառումների իրականացման համար ամերաժեշտ են բավարար ճշտության նակրոտնտեսական մոդելներ, որոնք, ըստ ներդասական տնտեսագետների բավականին հիմնավոր տեսակետի, առ այսօր բացակայում են:

IV Տնտեսության կայուն էկոնոմետրական մոդելը

Ինչպես արդեն նշեցինք նախորդ գլխում, մակրոտնտեսական մոդելների հիմնական թերությունը կայանում է նրանց անորոշության մեջ, ինչն իր հերթին պայմանավորված է մակրոտնտեսական պարամետրերի խիստ ընդգծված ստոխաստիկ կապերով եւ այդ կապերի բացահայտման գգալի դժվարություններով: Բնականաբար հարց է ծագում, թե ինչպես վարվել նման դեպքում:

Այս հարցի պատասխանը պետք է փնտրել ոչ թե մակրոտնտեսական հարթության մեջ, այլ՝ միջնորդավորված միկրոմակարդակով: Միաժամանակ, հարկ է նշել, որ մեթոդաբանական այս մոտեցումը նույնպես ունի իր զգալի բարդությունները, եւ որքան մեծ է տնտեսական համակարգը, այնքան շատ են բարդությունները: Ինչ վերաբերում է փոքր տնտեսական համակարգերին, ինչպիսին Հայաստանի Հանրապետության տնտեսությունն է, այս մեթոդաբանական մոտեցումը միանգամայն իրատեսական է եւ կարող է ապահովել համեմատաբար ավելի լավ արդյունքներ: Իսկապես, եթե ընդամենը մի քանի տասնյակ տնտեսական սուբյեկտներ կարող են երկրում մակրոտնտեսական եղանակ ստեղծել, ապա մակրոտնտեսական անմիջական կապերի որոնումը նույնիսկ անտրամաբանական է:

Ելնելով վերոհիշյալ նկատառումներից՝ ստորեւ առաջարկվում է տնտեսական համակարգը բնութագրող մոդել, որտեղ հաշվի են առնված նաև միկրոտնտեսական կապերը: Մոդելի արտադրական գործընթացների նկարագրության համար հիմք է ծառայել մաթեմատիկական տնտեսագիտության առավել ընդհանուր տեսքի օպտիմիզացիոն գծային մոդելը, որտեղ հաշվի են առնվում, ինչպես լեռնտեվայն մոդելի արտադրական գործընթացների փոխադարձ լրացման, այնպես էլ՝ ներդասական մոդելների փոխադարձ փոխարինման հնարավորությունները: Ինչ վերաբերում է փոխանակման գործընթացներին, ապա այստեղ փորձ է արվել կապ հաստատել արտադրական գործընթացների եւ իրական շուկաների միջեւ: Մոդելում կիրառում են գտել նաև էկոնոմետրական մոտեցումները՝ հատկապես, երբ խոսքը վերաբերում է փոխանակման գործընթացներին: Տնտեսական համակարգի լավագույն կառավարման նպատակով կիրառվել են նաև մաթեմատիկական ծրագրավորման մեթոդները:

Այսպիսով, ենթադրենք, թե տնտեսական համակարգը բաղկացած է ոստրյեկտներից, որոնց պայմանականորեն կանվանենք տեխնոլոգիական գործընթացներ: Այս գործընթացներն ընդհանուր դեպքում իրականացնում են ձեռնարկատիրական բազմատեսակ գործունեություն՝ արտադրություն, ծառայությունների մատուցում, առեւտուր, ներմուծում եւ արտահանում: Համակարգի կողմից թողարկված արդյունքը կանվանենք արտադրանքներ, որոնք յուրաքանչյուր դեպքում ունեն իրենց չափողականությունը (տոննա, խորանարդ-մետր, դրամ եւ այլն): Համակարգի կողմից թողարկվող արտադրանքների թիվը նշանակենք ո-ով: Այդ արտադրանքներից յուրաքանչյուրն ընդհանուր դեպքում իրենից ներկայացնում է տարբերակված ապրանք: Այսինքն՝ թողարկվելով համակարգի տարբեր տեխնոլոգիական գործընթացների կողմից՝ նրանք կարող են իրարից տարբերվել որակով, տեխնիկական պարամետրերով, բայց միեւնույն ժամանակ մնալ միմյանց փոխարինողներ (սուբստիտուտներ): Յուրաքանչյուր արտադրանք, իր սուբստիտուտներով հանդերձ, իրացվում է միայն մեկ շուկայում: Շուկաները կարող են ունենալ մի շարք դասակարգումներ:

1. Ըստ համակարգի նկատմամար առնչությամ՝ էնդոգեն եւ էկզոգեն շուկաներ: Այսինքն, եթե համակարգի կողմից թողարկված պարտադրանքն իրացվում է համակարգի ներսում, ապա շուկան կոչվում է էնդոգեն: Իսկ եթե արտադրանքը սպառվում է համակարգին չպատկանող սուբյեկտների կողմից, ապա շուկան կոչվում է էկզոգեն:

2. Ըստ գների եւ վաճառվող ապրանքի չափաքանակների՝ մեծածախ եւ մանրածախ:

3. Ըստ վաճառքն իրականացնող սուբյեկտների կարգավիճակի՝ ներքին եւ արտաքին շուկաներ: Այսինքն, եթե վաճառքն իրականացվում է Հայաստանի Հանրապետության գործակալների (ռեզիդենտների) միջեւ, ապա շուկան կոչվում է ներքին: Իսկ եթե վաճառքն իրականացվում է Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա գործակալների միջեւ, ապա շուկան կոչվում է արտաքին:

4. Ըստ սպառողների տիպի՝ սպառողական շուկաներ (սպառումն իրականացվում է բնակչության կամ այլ կերպ ասած տնային տնտեսությունների կողմից), արտադրական շուկաներ (սպառումն իրականացվում է

ձեռնարկությունների կողմից՝ իրենց ընթացիկ գործունեությունն ապահովելու նպատակով), ներդրումային ապրանքների շուկաներ (սպառումն իրականացվում է ձեռնարկությունների կողմից՝ իրենց արտադրական հզորությունները համալրելու կամ ընդլայնելու նպատակով), պետական գնումների շուկաներ (սպառումն իրականացվում է պետության կողմից՝ բյուջետային քաղաքականությունն իրականացնելու նպատակով):

Այսպիսով, համակարգի կողմից թողարկված յուրաքանչյուր արտադրանք կարող է իրացվել ընդհանուն մեկ շուկայում, որն ըստ տիպային դասակարգման կարող է լինել՝ օրինակ, էկզոգեն մանրածախ ներքին սպառողական: Միաժամանակ, հարկ է նշել, որ այդպիսի դասակարգման դեպքում ֆիզիկապես նույն արտադրանքը կարող է հաջորդաբար իրացվել մի քանի շուկաներում: Սակայն, այս դեպքում այդ նույն արտադրանքը դիտարկվում է՝ որպես իրարից տարբերվող արտադրանքներ՝ ըստ շուկաների քանակի: Այսպես, օրինակ, ենթադրենք համակարգի որևէ տեխնոլոգիական գործընթաց արտադրում է հեռախոսակապի ապարատներ եւ այն իրացնում էնդոգեն մեծածախ ներքին արտադրական շուկայում: Այդ ապարատները գնում է համակարգի մեկ այլ առեւտրական գործունեությամբ զբաղվող տեխնոլոգիական գործընթաց, որն իր հերթին այդ նույն ապարատները վաճառում է էկզոգեն մանրածախ ներքին սպառողական շուկայում: Տվյալ դեպքում հեռախոսակապի այդ նույն ապարատները դիտարկվում են որպես երկու իրարից տարբերվող արտադրանքներ:

Այսպիսով, տնտեսական համակարգը, որը բաղկացած է ոստրյուգիական գործընթացներից, դիտարկվող ժամանակաշրջանում թողարկում է ո տիպի (արտադրանք): Ենթադրվում է, որ ընդհանուր դեպքում յուրաքանչյուր տեխնոլոգիական գործընթաց կարող է թողարկել մեկից ավել տեսակի (արտադրանք), իսկ յուրաքանչյուր արտադրանք կարող է թողարկվել միաժամանակ մի քանի գործընթացների կողմից: Նետենաբար, տեխնոլոգիական (գործընթացների) համար նպատակահարմար է ներմուծել ինտենսիվության հասկացությունը:

Տեխնոլոգիական գործընթացի միավոր ինտենսիվություն կանվանենք կապիտալի եւ աշխատուժի այն համախմբությունները, երբ միավոր ժամանակում աշխատանքի օպտիմալ կազմակերպման դեպքում թողարկվում է b_{ij} , $i = 1, \dots, n$ արտադրանք:

Տնտեսական համակարգի թողարկման մատրիցան կլինի՝

$$B = \left\| b_{ij} \right\| \quad (IV.1)$$

i=1,...,n j=1,...,m

Համակարգի թողարկած արտադրանքների մի մասը սպառվում է համակարգի ներսում՝ իր տեխնոլոգիական կարիքների համար, իսկ մյուս մասն իրացվում է համակարգից դուրս՝ էկզոգեն շուկաներում:

Համակարգի էնդոգեն ծախսերի մատրիցան է՝

$$A = \left\| a_{ij} \right\| \quad (IV.2)$$

i=1,...,n j=1,...,m

որտեղ

a_{ij} -ն յ-րդ տեխնոլոգիական գործնթացի կողմից յ-րդ էնդոգեն արտադրանքի սպառման չափն է՝ միավոր ինտենսիվությամբ գործելու դեպքում:

Համակարգը կարող է սպառել նաև իր կողմից չթողարկված արտադրանքներ, որոնք կոչվում են նախնական: Նրանց թվում են ներմուծվող ապրանքներն, երկրի ներսում արտադրվող այն ապրանքները, որոնք պայմանականորեն ընդգրկված չեն համակարգի թողարկանան մեջ եւ այլն: Համակարգի էկզոգեն ծախսերի մատրիցան է՝

$$A^e = \left\| a_{ij}^e \right\| \quad (IV.3)$$

i = 1,...,l j = 1,...,m

որտեղ a_{ij}^e -ն յ-րդ տեխնոլոգիական գործնթացի կողմից յ-րդ էկզոգեն պրոդուկտի սպառման չափն է՝ միավոր ինտենսիվությամբ գործելու դեպքում,

ℓ -ը էկզոգեն պրոդուկտների թիվն է:

Աշխատանքը, որպես համակարգի կողմից սպառվող նախնական արտադրանք, նախնական մյուս արտադրանքների համեմատ ունի սպառման իր որոշակի առանձնահատկությունները: Բանն այն է, որ համակարգի ներմուծման գործունեությամբ գրադՎող տեխնոլոգիական գործնթացների համար (մասնավորապես, եթե խոսքը վերաբերում է ներկրողի հումքին), արտաքին շուկաների առաջարկը գործնականում կրում է բացարձակ էլաստիկ բնույթ: Սա պայմանավորված է հանրապետության ներքին շուկաների ոչ բավարար մեծությամբ, որտեղ ձեւավորված պահանջարկը չի կարող ազդել համաշխարհային գների վրա:

Ինչ վերաբերում է աշխատանքին, ապա այն ներկայումս հանդիսանում է ներքին ռեսուրս, որի գները ձեւավորվում են ներքին աշխատանքային շուկաներում: Այդ իսկ պատճառով այն դիտարկենք առանձին: Համակարգի j -րդ տեխնոլոգիական գործնթացի միավոր ինտենսիվությամբ գործելու դեպքում, աշխատանքի սպառման չափը նշանակենք \tilde{a}_j -ով:

Համակարգի թողարկած արտադրանքների այն մասը, որն իրացվում է էկզոգեն շուկաներում, կանվանենք գուտ թողարկում (արտադրանք): Տեխնոլոգիական նատրիցան, որը կապ է հաստատում գուտ թողարկման եւ տեխնոլոգիական պրոցեսների ինտենսիվությունների միջեւ, ունի հետեւյալ տեսքը՝

$$B - A = \begin{vmatrix} b_{11} - a_{11} & \dots & b_{1m} - a_{1m} \\ \dots & \dots & \dots \\ b_{n1} - a_{n1} & \dots & b_{nm} - a_{nm} \end{vmatrix} \quad (IV.4)$$

Այսպիսով, համակարգի գուտ թողարկումը կլինի՝

$$\bar{x} = (B - A)\bar{y} \quad (IV.5)$$

\bar{x}^* = (x_1, \dots, x_n) - գուտ թողարկման փոխադրված վեկտորն է,

$\bar{y}^* = (y_1, \dots, y_n)$ -ն տեխնոլոգիական գործընթացների ինտենսիվությունների փոխադրված վեկտորն է:

Ինչպես արդեն նշեցինք, զուտ արտադրանքն իրացվում է էկզոգեն շուկաներում երկրի բնակչության կողմից ներդրումային եւ պետական ծախսերի միջոցով, ինչպես նաև արտահանմամբ: Համակարգի կողմից թողարկվող արտադրանքների մնացած մասը սպառվում է համակարգի ներսում էկզոգեն շուկաներում, որտեղ շուկայական պահանջարկն ամբողջովին ծեւավորվում է՝ կախված էկզոգեն շուկաների պահանջարկից:

Բացի վերոհիշյալ էկզոգեն շուկաներից կան եւս երկու էկզոգեն շուկաներ, որոնք անմիջականորեն առնչվում են դիտարկվող տնտեսական համակարգի հետ: Դրանք աշխատանքի եւ փողի շուկաներն են:

Էկզոգեն շուկաներում պահանջարկի որոշիչները (դետերմինանտները) պայմանավորված են շուկայի տիպով: Այս շուկաները դիտարկենք հաջորդաբար.

ՆԵՐՔԻՆ ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐ

Այստեղ շուկայական պահանջարկի հիմնական որոշիչներն են բնակչության եկամուտներն ու իրական տոկոսադրույթը: Ընդ որում բնակչության եկամուտները պահանջարկի վրա թողնում են դրական ազդեցություն, իսկ իրական տոկոսադրույթը՝ բացասական: Այսինքն՝ եկամուտների աճը բերում է պահանջարկի ընդլայնման, իսկ տոկոսադրույթի աճը բարձրացնում է բնակչության խնայողությունների նկատմամբ ծգտումը՝ կրճատելով սպառողական պահանջարկը: Հաշվի առնելով այս, որ եկամուտների կազմում աշխատավարձը վճռորոշ մաս է հանդիսանում, բավարար ճշտությամբ կարելի է ընդունել եկամուտների չափը՝ կախված աշխատավարձի մեծությունից:

Այսպիսով, սպառողական տիպի ի-րդ արտադրանքի շուկայական պահանջարկն ընդհանուր դեպքում կունենա հետեւյալ տեսքը՝

$$C_i = \alpha_{io} + \sum_{q=1}^n \alpha_{iq} p_q + \sum_{j=1}^m \beta_{ij} \tilde{a}_j w_j y_j - \gamma_i r, \quad (IV.6)$$

որտեղ՝

p_q -ն սպառողական տիպի գ-րդ արտադրանքի գիմն է,

w_j -ն յ-րդ տեխնոլոգիական գործընթացում աշխատանքի միավորի դիմաց վճարվող աշխատավարձի չափն է:

$r = i_n - \pi^e$ - ներքին իրական տոկոսադրույթն է,

i_n -ը ներքին նոմինալ տոկոսադրույթն է,

π^e -ն սղաճի սպասվելիք ընթացքն է:

Վերը նշված կախվածությունն իրենից ներկայացնում է էկոնոմետրական հավասարում, որտեղ α_{io} , α_{iq} , β_{ij} , γ_i , i_n գրեթե սինոնիմ գործակիցները որոշվում են տվյալ շուկաների մարքետինգային ուսումնասիրության վիճակագրական տվյալներից՝ էկոնոմետրական մեթոդներով: Այստեղ հարկ է նշել, որ համակարգի կողմից թողարկվող ոչ բոլոր արտադրանքներն են սպառվում բնակչության կողմից: Հետեւաբար, վերը նշված գործակիցների մի մասը հավասար է գրոյի:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՊՐԱՍՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐ

Այստեղ շուկայական պահանջարկի հիմնական որոշիչներն են արտադրության ծավալներն ու ներքին իրական տոկոսադրույթը: Ընդ որում արտադրության ծավալները ներդրումային պահանջարկի վրա թողնում են դրական ազդեցություն, իսկ տոկոսադրույթը՝ բացասական:

Արտադրության ծավալների եւ ներդրումների միջեւ ուղիղ կապը բացմիցս հաստատված է էմպիրիկ ուսումնասիրություններով: Հաշվի առնելով, որ արտադրության ծավալներն անմիջականորեն պայմանավորված են տեխնոլոգիական գործընթացների ինտենսիվություններով՝ կունենանք՝

$$I_i = \xi_{io} + \sum_{q=1}^n \xi_{iq} p_q + \sum_{j=1}^m \zeta_{ij} y_j - \eta_i r, \quad (IV.7)$$

$i=1, \dots, n$

որտեղ p_q -ն գ-րդ ներդրումային տեսակի պրոդուկտի գինն է:

Քանի որ համակարգի կողմից թողարկվող ոչ բոլոր պրոդուտներն են են հանդիսանում ներդրումային տիպի ապրանքներ, ապա ξ_{io} , ξ_{iq} , ζ_{ij} , η_i համապատասխան գործակիցները հավասար են զրոյի:

ԱՐՏԱՔԻՆ ՇՈՒԿԱՆԵՐ

Այս տիպի շուկաներում հիմնական որոշիչներն են արտարժույթի փոխանակման կուրսը եւ արտաքին տոկոսադրույթը: Փոխանակման կուրսն արտահանման վրա թողնում է դրական ազդեցություն, իսկ արտաքին տոկոսադրույթը՝ բացասական: Յետեւաբար, արտահանվող -րդ արտադրանքի նկատմամբ պահանջարկն ընդհանուր դեպքում ունի հետեւյալ տեսքը՝

$$X_i = \vartheta_{io} + (1/E) \sum_{q=1}^n \vartheta_{iq} p_q - \mu_i r^* \quad (IV.8)$$

$i = 1, \dots, n$

որտեղ՝

p_q -ն արտահանվող գ-րդ պրոդուկտի գինն է՝ դրամ,
 E -ն արտարժույթի փոխանակման կուրսն է,
 r^* -ը արտաքին տոկոսադրույթն է:

Այստեղ նույնական պետք է հաշվի առնել, որ ոչ բոլոր արտադրանքներն են արտահանվող: Յետեւաբար, ϑ_{io} , ϑ_{iq} , μ_i համապատասխան գործակիցները հավասար են զրոյի:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆԵՐ

Այս շուկայում յուրաքանչյուր տեխնոլոգիական գործնթացի նկատմամբ ձեւավորվում է համապատասխան աշխատանքի առաջարկ՝

$$L_j = \lambda_{j0} + \sum_{q=1}^m \lambda_{jq} w_q \quad (IV.9)$$

$j = 1, \dots, m$

որտեղ՝ w_q -ն գ-րդ տեխնոլոգիական պրոցեսում միավոր աշխատանքի դիմաց վճարվող աշխատավարձն է:

ՓՈՂԻ ՇՈՒԿԱՆԵՐ

Այս շուկայում փողի նկատմամբ M^D պահանջարկն ընդհանուր դեպքում ունի հետեւյալ տեսքը՝

$$M^D = P_f (i_n, Q), \quad (IV.10)$$

որտեղ՝

Q -ն իրական համախառն ներքին արդյունքն է,
 P -ն համախառն ներքին արդյունքի ($Z_n U$) գնային դեֆյատորն է:

Յամախառն ներքին արդյունքը որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Z_n U = \sum_{j=1}^m \sum_{i=1}^n b_{ij} p_i y_j, \quad (IV.11)$$

որտեղ՝ p_i -ն ընթացիկ ժամանակաշրջանի գներն են:

Գնային դեֆլյատորի արժեքը կլինի՝

$$P = \frac{R_u}{Q} \quad (IV.12)$$

որտեղ

$$Q = \sum_{j=1}^m \sum_{i=1}^n b_{ij} p_{io} y_j,$$

p_{io} -ն i -րդ պրոդուկտի բազային ժամանակաշրջանի գինն է:

Ըստ Բառունու – Թորինի առավել տարածում գտած փողի պահանջարկի մոդելի՝

$$M^D = P \left(\frac{bQ}{2i_n} \right)^{1/2} \quad (IV.13)$$

որտեղ b -ն տրամսակցիոն ծախսերը բնութագրող պարամետրն է:

Հաշվի առնելով (IV.11) եւ (IV.12) առնչությունները՝ որոշ ձեւափոխություններից հետո կստանանք՝

$$M^D = \left(\frac{b}{2i_n \sum_{j=1}^m \sum_{i=1}^n b_{ij} p_{io} y_j} \right)^{1/2} \sum_{j=1}^m \sum_{i=1}^n b_{ij} p_i y_j : \quad (IV.14)$$

Եկողգեն շուկաներում իրացվող պրոդուկտները եւ դրանք քողարկող տեխնոլոգիական պրոցեսները համապատասխանաբար կանվանենք էկողգեն պրոդուկտներ եւ էկողգեն տեխնոլոգիական պրոցեսներ:

Այդ պրոդուկտների եւ պրոցեսների տարածատնան նպատակով ներմուծենք հետեւյալ օժանդակ ֆունկցիաները՝

$$g_i^{(o)} = \begin{cases} 1, & \text{եթե } i\text{-րդ պրոդուկտը իրացվում է էկողգեն շուկայում,} \\ 0, & \text{եթե } i\text{-րդ պրոդուկտը չի իրացվում էկողգեն շուկայում,} \end{cases} \quad (IV.15)$$

$i=1, \dots, n$

$$f_j^{(o)} = \begin{cases} 1, & \text{եթե } \sum_{i=1}^n g_i^{(o)} b_{ij} \neq 0, \\ 0, & \text{եթե } \sum_{i=1}^n g_i^{(o)} b_{ij} = 0, \end{cases} \quad j=1, \dots, m \quad (IV.16)$$

Տնտեսական համակարգի հավասարակշռության համար անհրաժեշտ է, որ առաջին հերթին հավասարակշռության մեջ գտնվեն էկողգեն շուկաները: Նրանց հավասարակշռության համար անհրաժեշտ են հետեւյալ պայմանները՝

$$\sum_{j=1}^m f_j^{(o)} b_{ij} y_j = g_i^{(o)} (C_i + I_i + X_i + G_i) \quad (IV.17)$$

$i=1, \dots, n$

$$\tilde{a}_j y_j = \lambda_{jo} + \sum_{q=1}^m \lambda_{jq} w_q \quad (IV.18)$$

$j=1, \dots, m$

$$M = \left(\frac{b}{2i_n \sum_{j=1}^m \sum_{i=1}^n b_{ij} p_{io} y_j} \right)^{1/2} \sum_{j=1}^m \sum_{i=1}^n b_{ij} p_i y_j \quad (IV.19)$$

որտեղ

G_i -ն i -րդ էկողգեն պրոդուկտի նկատմամբ պետական պահանջարկն է, որը որոշվում է պետական բյուջեյի կազմավորման գործընթացում,

$M = \Phi M_h$ - փողի առաջարկն է,

M_h -ը բարձր արդյունավետության փողի զանգվածն է,

Φ -ը փողի բազմարկիչն է:

Հաշվի առնելով (IV.6) - (IV.8) առնչությունները՝ որոշ ձեւափոխություններից հետո (IV.17)- (IV.19) պայմանները կընդունեն հետեւյալ տեսքը՝

$$\sum_{q=1}^n g_q^{(o)} \chi_{iq} p_q + g_i^{(o)} \sum_{j=1}^m (\beta_{ij} \tilde{a}_j w_j + \zeta_{ij} - f_j^{(o)} b_{ij}) y_j + g_i^{(o)} \theta_i = 0 \quad (IV.20)$$

$i=1, \dots, n$

$$\sum_{j=1}^m \lambda_{jq} w_q - \tilde{a}_j y_j + \lambda_{jo} = 0 \quad (IV.21)$$

$j=1, \dots, m$

$$\sum_{j=1}^m \sum_{i=1}^n b_{ij} p_{io} y_j - \frac{b}{2(r+\pi^e)} \left(\sum_{j=1}^m \sum_{i=1}^n b_{ij} p_i y_j \right)^2 = 0 \quad (IV.22)$$

$$\begin{aligned} \eta \rho \chi_{iq} \alpha_{iq} &+ \xi_{iq} + (1/E) \vartheta_{iq} \\ \theta_i &= \alpha_{io} + \xi_{io} + \vartheta_{io} + G_i - \gamma_i r - \eta_i r - \mu_i r^* \end{aligned} \quad (IV.23)$$

$i=1, \dots, n \quad q=1, \dots, n$

Այժմ դիտարկենք էկզոգեն տեխնոլոգիական գործընթացների շահույթը՝ ները՝

$$\begin{aligned} \pi_j &= f_j^{(o)} \left\{ \sum_{i=1}^n [(1-t_{1i}) b_{ij} - g_i^{(o)} a_{ij}] p_i - \sum_{i=1}^n (1-g_i^{(o)}) a_{ij} p_i - \right. \\ &\quad \left. - \sum_{i=1}^{\ell} (1+t_{2i}) a_{ij}^e p_i^e - (1+t_{3j}) \tilde{a}_j w_j \right\} y_j \end{aligned} \quad (IV.24)$$

$j=1, \dots, m$

որտեղ
 p_i -ն տնտեսական համակարգի կողմից թողարկվող և պրոդուկտի

գինն է,
 $\rho_i^{(e)}$ -ն տնտեսական համակարգի կողմից ներմուծվող և ըստ նախնական պրոդուկտի գինն է,
 t_{1i} -ն և պրոդուկտի իրացումից գանձվող անուղղակի հարկի դրույթաչփն է,
 t_{2i} -ն և պրոդուկտի ներմուծման մաքսային դրույթաչփն է,
 t_{3j} -ն և տեխնոլոգիական պրոցեսի կողմից կատարվող սոցիալական ապահովագրության վճարների դրույթաչփն է:

Հաշվի առնելով այն, որ յուրաքանչյուր տեխնոլոգիական պրոցես տնտեսական գործունեության արդյունքում ձգտում է մաքսիմիզացնել իր շահույթը՝ պետք է բավարարվեն հետեւյալ պայմանները՝

$$\begin{aligned} \frac{\partial \pi_j}{\partial y_j} &= f_j^{(o)} \left\{ \sum_{i=1}^n [(1-t_{1i}) b_{ij} - g_i^{(o)} a_{ij}] \frac{\partial p_i}{\partial y_j} - (1+t_{3j}) \tilde{a}_j \frac{\partial w_j}{\partial y_j} \right\} y_j + \\ &\quad + f_j^{(o)} \left\{ \sum_{i=1}^n [(1-t_{1i}) b_{ij} - g_i^{(o)} a_{ij}] p_i - \sum_{i=1}^n (1-g_i^{(o)}) a_{ij} p_i - \right. \\ &\quad \left. - \sum_{i=1}^{\ell} (1+t_{2i}) a_{ij}^e p_i^e - (1+t_{3j}) \tilde{a}_j w_j \right\} = 0 \end{aligned} \quad (IV.25)$$

$j=1, \dots, m$

Հավասարումների (IV.20) և (IV.21) համակարգերից ակնհայտ է, որ էկզոգեն արտադրամների $g_i^{(o)} p_i$ գները եւ $f_j^{(o)} w_j$ աշխատավարձերը հանդիսանում են ոչ բացահայտ ֆունկցիաներ y_j ինտենսիվություններից: Տեսւեարար, $g_i^{(o)} f_j^{(o)} \partial \pi_j / \partial y_j$, $f_j^{(o)} \partial w_j / \partial y_j$ ածանցյալների որոշման համար կիրառենք ոչ բացահայտ ֆունկցիաների ածանցման մեթոդը:

$$g_i^{(o)} (\beta_{ij} \tilde{a}_j w_j + \zeta_{ij} - f_j^{(o)} b_{ij}) + g_i^{(o)} \beta_{ij} \tilde{a}_j y_j \frac{\partial w_j}{\partial y_j} + g_i^{(o)} \sum_{q=1}^n g_q^{(o)} \chi_{iq} \frac{\partial p_q}{\partial y_j} = 0 \quad (IV.26)$$

$i=1, \dots, n, \quad j=1, \dots, m$

$$-\tilde{a}_j + \sum_{q=1}^m \lambda_{jq} \frac{\partial w_q}{\partial y_j} = 0 \quad (IV.27)$$

$j=1, \dots, m$

Յամակարգի կողմից թողարկվող արտադրանքների կազմից առաջին կարգի էնդոգեն արտադրանքների եւ առաջին կարգի էնդոգեն տեխնոլոգիական գործընթացների տարանջատման համար ներմուծենք հետեւյալ օժանդակ ֆունկցիաները՝

$$g_j^{(1)} = \begin{cases} 1, & \text{եթե } (1 - g_i^{(0)}) \sum_{j=1}^m f_j^{(0)} a_{ij} \neq 0 \\ 0, & \text{եթե } (1 - g_i^{(0)}) \sum_{j=1}^m f_j^{(0)} a_{ij} = 0 \end{cases} \quad (IV.28)$$

$i=1, \dots, n$

$$f_j^{(1)} = \begin{cases} 1, & \text{եթե } \sum_{i=1}^n g_i^{(1)} b_{ij} \neq 0 \\ 0, & \text{եթե } \sum_{i=1}^n g_i^{(1)} b_{ij} = 0 \end{cases} \quad (IV.29)$$

$j=1, \dots, m$

Այստեղ պետք է հաշվի առնել նաեւ այն կարեւոր հաճամանքն, որ առաջին կարգի էնդոգեն պրոդուկտների նկատմամբ լրացուցիչ պահանջարկ կարող են ներկայացնել նաեւ էնդոգեն շուկաներում իրենց պրոդուկտն իրացնող տեխնոլոգիական պրոցեսները։ Այս նկատառումից ելնելով՝ առաջին կարգի էնդոգեն պրոդուկտների նկատմամբ ամբողջական պահանջարկը կընդունի հետեւյալ տեսքը՝

$$Q_i = g_i^{(1)} \sum_{j=1}^m f_j^{(0)} a_{ij} y_j + g_i^{(1)} \sum_{j=1}^m (1 - f_j^{(0)}) a_{ij} y_j \quad (IV.30)$$

$i=1, \dots, n$

Առաջին կարգի էնդոգեն շուկաների հավասարակշռության համար, առաջին կարգի էնդոգեն պրոդուկտների թողարկումը պետք է հավասար լինի այդ պրոդուկտների նկատմամբ ամբողջական պահանջարկին՝

$$\sum_{j=1}^m f_j^{(1)} b_{ij} y_j = g_j^{(1)} \sum_{j=1}^m f_j^{(0)} a_{ij} y_j + g_j^{(1)} \sum_{j=1}^m (1 - f_j^{(0)}) a_{ij} y_j \quad (IV.31)$$

$i=1, \dots, n$

Յաշվի առնելով այն, որ առաջին կարգի էնդոգեն պրոդուկտներ սպառող տեխնոլոգիական պրոցեսների շարքում կարող են լինել նաեւ առաջին կարգի էնդոգեն տեխնոլոգիական պրոցեսներ՝ նպատակահարմար է (IV.31) արտահայտություններում նրանց տարանջատումը՝

$$g_i^{(1)} \sum_{j=1}^m f_j^{(0)} a_{ij} y_j + \sum_{j=1}^m [g_i^{(1)} (1 - f_j^{(0)}) a_{ij} - f_j^{(1)} b_{ij}] y_j = 0 \quad (IV.32)$$

$i=1, \dots, n$

Այժմ դիտարկենք առաջին կարգի էնդոգեն տեխնոլոգիական պրոցեսների շահույթները՝

$$\begin{aligned} \pi_j = & f_j^{(1)} \left\{ \sum_{i=1}^n [(1 - t_{1i}) b_{ij} - (g_i^{(0)} + g_i^{(1)}) a_{ij}] p_i - \right. \\ & \left. - \sum_{i=1}^n (1 - g_i^{(0)} - g_i^{(1)}) a_{ij} p_i - \sum_{i=1}^{\ell} (1 + t_{2i}) a_{ij}^e p_i^e - (1 + t_{3j}) \tilde{a}_j w_j \right\} y_j \end{aligned} \quad (IV.33)$$

$j=1, \dots, m$

Նրանց մաքսիմիզացման պայմանները կլինեն՝

$$\begin{aligned} \frac{\partial \pi_j}{\partial y_j} = & f_i^{(t)} \left\{ \sum_{i=1}^n [(1 - t_{1i}) b_{ij} - (g_i^{(o)} + g_i^{(t)}) a_{ij}] \frac{\partial p_i}{\partial y_j} - (1 + t_{3j}) \tilde{a}_j \frac{\partial w_j}{\partial y_j} \right\} y_j + \\ & + f_j^{(t)} \left\{ \sum_{i=1}^n [(1 - t_{1i}) b_{ij} - (g_i^{(o)} + g_i^{(t)}) a_{ij}] p_i - \sum_{i=1}^n (1 - g_i^{(o)} - g_i^{(t)}) a_{ij} p_i - \right. \\ & \left. - \sum_{i=1}^{\ell} (1 + t_{2i}) a_{ij} p_i - (1 + t_{3j}) \tilde{a}_j w_j \right\} = 0 \quad (IV.34) \\ j = 1, \dots, m \end{aligned}$$

Այս հավասարումներում $\partial p_i / \partial y_j$ անհայտների որոշման համար դիտարկենք առաջին կարգի էնդոգեն շուկաների հավասարակշռության (IV.32) պայմանները, որտեղ՝

$$g_i^{(t)} \sum_{j=1}^m f_i^{(o)} a_{ij} y_j \quad (IV.35) \\ i = 1, \dots, n$$

արտահայտությունները տվյալ շուկաներում էկզոգեն տեխնոլոգիական պրոցեսների պահանջարկներն են: Իրենց հերթին այդ պրոցեսների ինտենսիվությունները (IV.25) հավասարումների միջոցով անմիջականորեն կախված են առաջին կարգի էնդոգեն պրոդուկտների գներից, ինչը կրում է ոչ բացահայտ բնույթը: Յետեւաբար, (IV.32) հավասարումները կարող են դիտարկվել՝ որպես առաջին կարգի էնդոգեն պրոդուկտների գների ոչ բացահայտ ֆունկցիաներ՝ առաջին կարգի էնդոգեն տեխնոլոգիական պրոցեսների ինտենսիվություններից: Այժմ որոշենք $\partial p_j / \partial y_j$ ածանցյալները: Անբացահայտ ֆունկցիաների տեսության համաձայն կստանանք՝

$$\begin{aligned} & [g_i^{(t)} (1 - f_j^{(o)}) a_{ij} - f_j^{(t)} b_{ij}] + g_i^{(t)} (1 - f_j^{(o)}) \sum_{s=1}^m f_s^{(o)} a_{is} \frac{\partial y_s}{\partial y_j} + \\ & + g_i^{(t)} (1 - f_j^{(o)}) \sum_{s=1}^m \sum_{q=1}^n f_s^{(o)} g_q^{(t)} \frac{\partial y_s}{\partial p_q} \cdot \frac{\partial p_q}{\partial y_j} = 0 \quad (IV.36) \\ i = 1, \dots, n \quad j = 1, \dots, m \end{aligned}$$

Հավասարումների (IV.36) համակարգում ի հայտ են եկել նոր անհայտ ածանցյալներ՝ $\partial y_s / \partial y_j$ եւ $\partial y_s / \partial p_q$: Նրանց նկատմամբ հավասարումները պետք է ստանալ (IV.25) համակարգից: Ոչ բացահայտ ֆունկցիաների տեսության համաձայն, որոշ ձեւափոխություններից հետո կստանանք՝

$$\begin{aligned} & f_j^{(o)} (1 - f_k^{(o)}) \sum_{i=1}^n [(1 - t_{1i}) b_{ij} - g_i^{(o)} a_{ij}] \left[\frac{\partial p_i}{\partial y_k} + \frac{\partial p_i}{\partial y_j} \cdot \frac{\partial y_j}{\partial y_k} \right] + \quad (IV.37) \\ & + \sum_{s=1}^m f_s^{(o)} \frac{\partial p_i}{\partial y_s} \cdot \frac{\partial y_s}{\partial y_k} - f_j^{(o)} (1 - f_k^{(o)}) (1 + t_{3j}) \tilde{a}_j \left(\frac{\partial w_j}{\partial y_k} + \frac{\partial w_j}{\partial y_j} \cdot \frac{\partial y_j}{\partial y_k} \right) + \\ & + \sum_{s=1}^m f_s^{(o)} \frac{\partial w_j}{\partial y_s} \frac{\partial y_s}{\partial y_k} = 0 \quad j = 1, \dots, m \quad k = 1, \dots, m \end{aligned}$$

$$\begin{aligned} & f_j^{(o)} g_i^{(o)} [a_{ij} - (1 + t_{3j}) \frac{\partial w_j}{\partial y_j} \cdot \frac{\partial y_j}{\partial p_i} - (1 + t_{3j}) \sum_{s=1}^m f_s^{(o)} \frac{\partial w_j}{\partial y_s} \cdot \frac{\partial y_s}{\partial p_i}] + \\ & + f_j^{(o)} g_i^{(t)} \sum_{q=1}^n [(1 - t_{1q}) b_{qj} - g_q^{(o)} a_{qj}] \left[\frac{\partial p_q}{\partial y_j} \cdot \frac{\partial y_j}{\partial p_i} + \sum_{s=1}^m f_s^{(o)} \frac{\partial p_q}{\partial y_s} \cdot \frac{\partial y_s}{\partial p_i} \right] = 0 \quad (IV.38) \\ i = 1, \dots, n \quad j = 1, \dots, m \end{aligned}$$

Առաջին կարգի էնդոգեն տեխնոլոգիական պրոցեսներն իրենց հերթին սպառում են համակարգի կողմից թողարկված որոշակի պրոդուկտներ:

Այդ պրոդուկտներից նրանք, որոնք չեն պատկանում առաջին կարգի էնդոգեն պրոդուկտների թվին, կանվանենք երկրորդ կարգի էնդոգեն պրոդուկտներ, իսկ իրացման շուկաները՝ երկրորդ կարգի էնդոգեն շուկաներ: Այդ պրոդուկտները թողարկող տեխնոլոգիական պրոցեսները կանվանենք երկրորդ կարգի էնդոգեն տեխնոլոգիական պրոցեսներ:

Երկրորդ կարգի էնդոգեն պրոդուկտների եւ տեխնոլոգիական պրոցես-

Աերի տարանջատման համար ներմուծենք հետեւյալ օժանդակ ֆունկցիաները՝

$$g_i^{(2)} = \begin{cases} 1, & \text{եթե } (1 - g_i^{(0)}) (1 - g_i^{(1)}) \sum_{j=1}^m f_j^{(1)} a_{ij} \neq 0, \\ 0, & \text{եթե } (1 - g_i^{(0)}) (1 - g_i^{(1)}) \sum_{j=1}^m f_j^{(1)} a_{ij} = 0, \end{cases} \quad (\text{IV.39})$$

$$f_j^{(2)} = \begin{cases} 1, & \text{եթե } \sum_{i=1}^n g_i^{(2)} b_{ij} \neq 0, \\ 0, & \text{եթե } \sum_{i=1}^n g_i^{(2)} b_{ij} = 0, \end{cases} \quad (\text{IV.40})$$

$i=1, \dots, n$
 $j=1, \dots, m$

Երկրորդ կարգի էնդոգեն պրոդուկտների նկատմամբ ամբողջական պահանջարկը կլինի՝

$$Q_i = g_i^{(2)} \sum_{j=1}^m f_j^{(1)} a_{ij} y_j + g_i^{(2)} \sum_{j=1}^m (1 - f_j^{(1)}) a_{ij} y_j \quad (\text{IV.41})$$

$i=1, \dots, n$

Երկրորդ կարգի էնդոգեն շուկաների հավասարակշռության համար պետք է տեղի ուժենան հետեւյալ պայմանները՝

$$\sum_{j=1}^m f_j^{(2)} b_{ij} y_j = g_i^{(2)} \sum_{j=1}^m f_j^{(1)} a_{ij} y_j + g_i^{(2)} \sum_{j=1}^m (1 - f_j^{(1)}) a_{ij} y_j \quad (\text{IV.42})$$

$i=1, \dots, n$

Երկրորդ կարգի էնդոգեն տեխնոլոգիական պրոցեսների շահույթները կլինեն՝

$$\pi_j = f_j^{(2)} \left\{ \sum_{i=1}^n [(1 - t_{1i}) b_{ij} - (g_i^{(0)} + g_i^{(1)} + g_i^{(2)}) a_{ij}] p_i - \right. \\ \left. - \sum_{i=1}^n (1 - g_i^{(0)} - g_i^{(1)} - g_i^{(2)}) a_{ij} p_i - \sum_{i=1}^{\ell} [(1 + t_{2i}) a_{ij}^e p_i^e - (1 + t_{3i}) \tilde{a}_j w_j] y_j \right\} \quad (\text{IV.43})$$

$j=1, \dots, m$

Քանի որ (IV.39) - (IV.43) առնչությունները հանդիսանում են ելակետային՝ երկրորդ կարգի էնդոգեն պրոցեսների համար, ապա նրանց տեսքից ակնհայտ են դառնում հետագա հաշվարկների օրինաչափությունները։ Այդ հաշվարկները փաստորեն իրենցից ներկայացնում են իշեռացիաներ։ Գրենք z -րդ կարգի էնդոգեն պրոդուկտներին եւ տեխնոլոգիական պրոցեսներին համապատասխան հավասարումները՝

$$g_i^{(z)} = \begin{cases} 1, & \text{եթե } \prod_{s=0}^{z-1} (1 - g_i^{(s)}) \sum_{j=1}^m f_j^{(s+1)} a_{ij} \neq 0, \\ 0, & \text{եթե } \prod_{s=0}^{z-1} (1 - g_i^{(s)}) \sum_{j=1}^m f_j^{(s+1)} a_{ij} = 0, \end{cases} \quad (\text{IV.44})$$

$i=1, \dots, n$

$$f_j^{(z)} = \begin{cases} 1, & \text{եթե } \sum_{i=1}^n g_i^{(z)} b_{ij} \neq 0, \\ 0, & \text{եթե } \sum_{i=1}^n g_i^{(z)} b_{ij} = 0, \end{cases} \quad (\text{IV.45})$$

$j=1, \dots, n$

$$\sum_{j=1}^m f_j^{(z)} b_{ij} y_j = g_i^{(z)} \sum_{j=1}^m f_j^{(z-1)} a_{ij} y_j + g_i^{(z)} \sum_{j=1}^m (1 - f_j^{(z-1)}) a_{ij} y_j = 0 \quad (\text{IV.46})$$

$i=1, \dots, n$

$$f_j^{(z)} \left\{ \sum_{i=1}^n [(1 - t_{1i}) b_{ij} - \sum_{s=0}^z g_i^{(s)} a_{ij}] \frac{\partial p_i}{\partial y_j} - (1 + t_{3j}) \tilde{a}_j \frac{\partial w_j}{\partial y_j} \right\} y_j + \\ + f_j^{(z)} \left\{ \sum_{i=1}^n [(1 - t_{1i}) b_{ij} - \sum_{s=0}^z g_i^{(s)} a_{ij}] p_i - \sum_{i=1}^n (1 - \sum_{s=0}^z g_i^{(s)}) a_{ij} p_i - \right. \\ \left. - \sum_{i=1}^{\ell} (1 + t_{2i}) a_{ij}^e p_i^e - (1 + t_{3j}) \tilde{a}_j w_j \right\} = 0, \quad j=1, \dots, m \quad (\text{IV.47})$$

$$\begin{aligned} & [g_i^{(z)}(1-f_j^{(z-1)})a_{ij} - f_j^{(z)}b_{ij}] + g_i^{(z)}(1-f_j^{(z-1)})\sum_{s=1}^m f_s^{(z-1)}a_{is} \frac{\partial y_s}{\partial y_j} + g_i^{(z)}(1-f_j^{(z-1)}) \cdot \\ & \cdot \sum_{s=1}^m \sum_{q=1}^n f_s^{(z-1)}g_q \frac{\partial y_s}{\partial p_q} \cdot \frac{\partial p_q}{\partial y_j} = 0 \end{aligned} \quad (\text{IV.48})$$

i=1, ..., n j=1, ..., m

$$\begin{aligned} & f_j^{(z-1)}(1-f_k^{(z-1)})\sum_{i=1}^n [(1-t_{1i})b_{ij} + g_i^{(z-1)}a_{ij}] \left[\frac{\partial p_i}{\partial y_k} + \frac{\partial p_i}{\partial y_j} \cdot \frac{\partial y_j}{\partial y_k} + \right. \\ & \left. + \sum_{s=1}^m f_s^{(z-1)} \frac{\partial p_i}{\partial y_s} \cdot \frac{\partial y_s}{\partial y_k} \right] - f_j^{(z-1)}(1-f_k^{(z-1)})(1+t_{3j})\tilde{a}_j \left(\frac{\partial w_j}{\partial y_k} + \frac{\partial w_j}{\partial y_j} \cdot \frac{\partial y_j}{\partial y_k} + \right. \\ & \left. + \sum_{s=1}^m f_s^{(z-1)} \frac{\partial w_j}{\partial y_s} \cdot \frac{\partial y_s}{\partial y_k} \right) = 0 \end{aligned} \quad (\text{IV.49})$$

j=1, ..., m k=1, ..., m

$$\begin{aligned} & f_j^{(z-1)}g_i^{(z)} \left[a_{ij} - (1+t_{3j}) \frac{\partial w_j}{\partial y_j} \cdot \frac{\partial y_j}{\partial p_i} - (1+t_{3j}) \sum_{s=1}^m f_s^{(z-1)} \frac{\partial w_j}{\partial y_s} \cdot \frac{\partial y_s}{\partial p_i} \right] + \\ & + f_j^{(z-1)}g_i^{(z)} \sum_{q=1}^n [(1-t_{1q})b_{qj} - g_q^{(z-1)}a_{qj}] \left[\frac{\partial p_q}{\partial y_j} \cdot \frac{\partial y_j}{\partial p_i} + \sum_{s=1}^m f_s^{(z-1)} \frac{\partial p_q}{\partial y_s} \cdot \frac{\partial y_s}{\partial p_i} \right] = 0 \end{aligned} \quad (\text{IV.50})$$

i=1, ..., n j=1, ..., m

Իտեռացիոն հաշվարկները կավարտվեն որեւէ օպերատոր քայլում, եթե տեղի ունենա հետեւյալ պայմանը՝

$$\sum_{i=1}^n \sum_{z=1}^m g_i^{(z)} = n \quad (\text{IV.51})$$

Այսպիսով, տնտեսական համակարգը կգտնվի հավասարակշռության մեջ, եթե տեղի ունենան (IV.20) - (IV.22), (IV.26), (IV.27), (IV.46) - (IV.51) հավասարումները: Այս հավասարումներում մասնակցում են տնտեսական քաղաքականության G_i, E, M_h, φ, i_n, b, t_{1i}, t_{2i}, t_{3j} գործիքները, որոնց ֆիքսված արժեքների դեպքում գործընթացների y_{3j} ինտենսիվությունները, պրոդուկտների քանակները եւ w_j աշխատավարձերը ստանում են իրենց որոշակի արժեքները: Յետեւաբար, այդ գործիքների արժեքների փոփոխումներով կարելի է հասնել (y_j, p_i, w_j) համախմբության կոնկրետ արժեքների: Սակայն պետք է հաշվի առնել այն կարեւոր հանգամանքը, որ այդ գործիքների մեջությունները գործնական քաղաքականության մեջ որոշակիորեն սահմանափակված են: Մասնավորապես պետական G_i ծախսերը ակնհայտորեն սահմանափակ են ներքեւից՝

$$G_i \geq G_{i\min}, \quad i=1, \dots, n$$

քանի որ հակառակ դեպքում պետությունը չէր կարող իրականացնել իր պարտադիր ֆունկցիաները՝ երկրի անվտանգության եւ ենթակառուցվածքների գործունեության ապահովումը, սոցիալական հարցերի լուծումը եւ այլն:

Մյուս կողմից ակնհայտ է, որ պետական G_i ծախսերը սահմանափակ են նաև վերեւից՝

$$G_i \leq G_{i\max}, \quad i=1, \dots, n$$

որտեղ վերին սահմանի մեջությունը պայմանավորված է հարկային, մաքսային եկամուտների եւ սոցիալական վճարումների սահմանափակ հնարավորություններով, ինչպես նաև պետական բյուջեի պակասորդի թույլատրելի չափերով:

Նույնպիսի դատողություններ կարելի է անել նաև տնտեսական քաղաքականության մյուս գործիքների վերաբերյալ: Օրինակ, պետությունն ամեն կերպ պետք է նպաստի փողի շուկայում տրանսակցիոն ծախսերի կրճատմանը եւ փողի բազմարկչի առավել չափով մեծացմանը:

Սակայն, այս խնդիրներն առանձին ուսումնասիրություն են պահանջում եւ դուրս են ներկայացվող աշխատության շրջանակներից:

Ինչպես նշվեց երկրորդ գլխում, տնտեսական քաղաքականության հիմ-

նական նպատակը հաճախ ներքին հավասարակշռության ապահովումն է, ինչը բնութագրվում է զբաղվածության հնարավոր բարձր աստիճանով եւ սղածի թույլատրելի չափով: Այս տեսակետից, քննարկվող մոդելի հիման վրա կարելի է ձեռակերպել տնտեսության օպտիմալ պետական կառավարման խնդիր, որտեղ որպես նպատակային ֆունկցիա է հանդիսանում տեխնոլոգիական պրոցեսների ինտենսիվությունների գումարը՝

$$\sum_{j=1}^m y_j$$

Խնդիրը սա է՝ մաքսիմիզացնել նպատակային ֆունկցիայի արժեքը առկա սահմանափակումների պայմաններում

$$\max \sum_{j=1}^m y_j \quad (\text{IV.52})$$

Տեղի ունեն (IV.20)-(IV.22), (IV.26), (IV.27), (IV.46)-(IV.51) հավասարումները:

$$y_i \geq 0, \dots, y_m \geq 0, \quad p_1 > 0, \dots, p_n > 0,$$

$$G_{i\min} \leq G_i \leq G_{i\max}, \quad E_{\min} \leq E \leq E_{\max}, \quad M_{h\min} \leq M_h \leq M_{h\max},$$

$$\phi_{\min} \leq \phi, \quad 0 < b \leq b_{\max}, \quad i_{n\min} \leq i_n \leq i_{n\max},$$

$$t_{1i\min} \leq t_{1i} \leq t_{1i\max}, \quad t_{2i\min} \leq t_{2i} \leq t_{2i\max}, \quad t_{3j\min} \leq t_{3j} \leq t_{3j\max},$$

$$P = \frac{\sum_{j=1}^m \sum_{i=1}^n b_{ij} p_i y_j}{\sum_{j=1}^m \sum_{i=1}^n b_{ij} p_{io} y_j} \leq P_{\max}:$$

Սա իրենից ներկայացնում է մաթեմատիկական ոչ գծային ծրագրավորման խնդիր, որի լուծման համար կարելի է կիրառել ոչ գծային ծրագրավորման համապատասխան մեթոդները:

Դարկ է նշել, որ վերոհիշյալ խնդիրը դիտարկվում է տնտեսական կարճատեր ժամանակաշրջանների համար, երբ տնտեսական համակարգում

առկա կապիտալի մեծությունը անփոփոխ է: Դետեւաբար, տեխնոլոգիական պրոցեսների յ ինտենսիվությունները բնականաբար սահմանափակ մեծություններ են, ինչը դեռևս հաշվի չի առնված վերոհիշյալ օպտիմիզացիոն խնդրում: Դա արված է կանխամտածված քննարկվող մոդելի հնարավորություններն առավել չափով բացահայտելու համար: Այսպես, եթե օպտիմիզացիոն խնդրի լուծման արդյունքում ստացվի y_j առավելագույնը՝ $y_{j\max}$, ապա անհրաժեշտ է տվյալ պրոցեսի ինտենսիվության համար խնդրի պայմանների մեջ մտցնել $y_j \leq y_{j\max}$, սահմանափակումը, իսկ $\partial P / \partial y_j = 0$ հավասարումը փոխարինել $\partial P / \partial y_j \geq 0$ անհավասարությամբ եւ օպտիմիզացիոն խնդիրը նորից լուծել:

Այսպիսով, դիտարկվող մոդելը հնարավորություն է տալիս տնտեսական կարճաժամկետ ժամանակաշրջանների համար մշակել անհրաժեշտ տնտեսական քաղաքականություն, ինչպես նաև ազգային անվտանգությանը սպառնացող տնտեսական ցնցումների ժամանակ իրականացնել օպտիմալ կառավարում:

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՍԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառացած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում նրգունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համարդարված կարողականության չափորոշիչներով: Փոխսրենք հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, ինարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին ինարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործնթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության նորելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Բաղադրակրթական նրգակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՇ, ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակոյսում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվուն պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմանը, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառությները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսուրվում քաղաքակրթությունների շիման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սամահինի, Գլածորի, Տաթկի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գենոֆոնի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային համրությանը, դառնալով բաղադրակրթությունների լավագույն ձեռքբերուների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետների օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

ՀԻՄՍԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒԽԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառությները:

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովողի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չօրս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կը նկնջեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաճայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցների համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,
- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,
- պետական կառավարման օպտիմալ համակարգերի նոդելավորում:

դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում՝

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,
- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,
- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,
- տարրեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- տեղեկատվական-քարոզական ցանցի հայեցակարգի մշակում,
- քարոզական համադրման մեխանիզմների ձևավորում,
- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում համրությանը,
- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգային ծրագրերի ստեղծում,
- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

ԴԻՍԱՐԱՍԻ ԱՊԱԶԻԿԱ

ԱՇԽԱՏԱՍՔՆԵՐԻ ԴԻՍԱԿԱՆ ՈՒՂՈՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունը արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով միշարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթուն գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայունս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել պատասխան: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված իիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես իիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում

բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝

• արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառությունները,

• ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. Էռլեյուն, բովանդակություն,

• հայկական շարունակականության հայեցակարգը,

• ազգային և պետական շահ ընթանումների փոխհարթերակցությունը,

• ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,

• ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

• Հայոց Ցեղասպանության ճամաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,

• Հայունիք-Սփյուռք առնչությունների մողելավորման իիմնախնդիրները,

• Սփյուռքի ազգապահպաննան գործոնները և հայոց անկախ պետականության գործառությները,

• ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրությները,

• ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,

• գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,

• անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.

• ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,

• հագետ-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,

• մշակութային անվտանգության հիմնադրույթներ,

• կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,

• գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,

• տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,

• կոնունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,

• տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,

• բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,

• ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,

• առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,

• սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

Անդրանիկ Սարգսյան - ՀՀ Կարչապետ

**Մանուկ Թոփուզյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

**Կարինե Կիրակոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարարի տեղակալ**

Լևոն Մկրտչյան - ՀՀ Կրթության և գիտության նախարար

**Տիգրան Սարգսյան - ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ
Արա Ավետիսյան - ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ**

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: noravank@arminco.com